**«Սպիտակի Հելսինկյան խումբ»
իրավապաշտպան հասարակական
կազմակերպություն**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հետազոտությունն իրականացվել է «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, որի նպատակն է կանանց և աղջիկների աջակցության գործընթացում ռազմավարական ուղղությունների և հասցեական գործունեության ուղղորդումը Լոռու մարզում:

Ծրագիրն իրականացվել է շվեդական Kvinna till Kvinna հիմնադրամի աջակցությամբ:

Հետազոտության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Kvinna till Kvinna հիմնադրամի տեսակետների հետ:

Զեկույցի բովանդակության պատասխանատուն բացառապես հետազոտության հեղինակին է:

2025

Բովանդակություն

Երախտիքի խոսք 3
Հապավումներ 4
Բացատրական բառարան 4
Նախաբան 5
Հետազոտության նպատակը, խնդիրները 6
Հետազոտության մեթոդաբանություն 7
Տվյալների հավաքագրման մեթոդներ 7
Ընտրանք 8
Տվյալների վերլուծություն 10
Ամփոփում 11
Հետազոտության հիմնական արդյունքները 15
Կրթություն 15
Աշխատանք/զբաղվածություն 22
Առողջապահություն 31
Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն 38
Գենդերային հիմնախնդիրներ 46
Ճգնաժամային իրավիճակների արձագանքում 56
Եզրակացություն 60
Կրթություն 60
Աշխատանք/զբաղվածություն 61
Առողջապահություն 62
Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն 63
Գենդերային հիմնախնդիրներ 64
Ճգնաժամային իրավիճակների արձագանքում 65
Առաջարկություններ 67
Կրթություն 67
Աշխատանք/զբաղվածություն 68
Առողջապահություն 70
Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն 71
Գենդերային հիմնախնդիրներ 72
Ճգնաժամային իրավիճակների արձագանքում 74

Երախտիքի խոսք

«Սպիտակի Հելսինկյան խումբ» (այսուհետ նաև՝ ՍՀԽ) հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ՀԿ) բարձր է գնահատում բոլոր գործընկեր կազմակերպությունների աջակցությունը, առանց որոնց ակնհայտորեն դժվար կլիներ սույն հետազոտության իրականացումը: Դրանց թվում առանձնակի ընդգծվում են «Արփի» ՀԿ-ն, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ-ն, «ՀԵԲԱ» ՀԿ-ն, Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոնը, Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական բաժինը, «Տաշիր երիտասարդական կենտրոն» ՀԿ-ն:

Անգնահատելի է ՍՀԽ-ի ընկերների մասնագիտական ներդրումը, որոնք Լոռու մարզի տարբեր համայնքների բնակչուհիներ են և խորապես իրազեկ են համայնքների խնդիրներին:

ՍՀԽ-ն իր խորին երախտագիտությունն է հայտնում հետազոտության բոլոր մասնակիցներին և աջակիցներին, որոնք ջանք ու ժամանակ չեն խնայել՝ նպաստելու ՍՀԽ-ի սույն նախաձեռնության իրականացմանը, Լոռու մարզի կանանց ու աղջիկների կարիքների և հիմնախնդիրների բացահայտմանը:

Սույն հետազոտությունն իրականացվել է գենդերային և սոցիալական ներառման փորձագետ Սոնա Գրիգորյանի ղեկավարությամբ:

Հապավումներ

ԳՏՃՄ – Գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա
Ը/Բ – Ընտանեկան բռնություն
ԼԳԲՏՔ + – լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր և այլ ինքնության անձինք
ՀԿ – հասարակական կազմակերպություն
ՍՀԽ – Սպիտակի Հելսինկյան խումբ

Բացատրական բառարան

«Էյջիզմ» (ageism) - անձի՝ տարիքի վրա հիմնված նախապաշարմունք կամ խտրականություն

«Հեյթըր» (hater) - ատելության խոսք[1] տարածող

«Ոչ ոքի չանտեսելով» (Leave no one behind) - Միացյալ Ազգերի (ՄԱԿ) 2030 թվականի կայուն զարգացման օրակարգի և դրա կայուն զարգացման նպատակների կենտրոնական սկզբունքը: Սա ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների պարտավորությունն է՝ վերջ դնել ծայրահեղ աղքատությանը, դադարեցնել խտրականությունն ու մեկուսացումը, ինչպես նաև նվազեցնել անհավասարությունը՝ ապահովելու համար, որ կայուն զարգացումը օգուտ բերի բոլորին, մասնավորապես՝ ամենաանապահով և խոցելի խմբերին:

Փոխհատականություն[2] (intersectionality) - շրջանակ, որ բացատրում է, թե ինչպես են միևնույն անձի համար տարբեր սոցիալական կառուցվածքները՝ ռասան, գենդերը, սեռական կողմնորոշումը, դասը և այլն, ստեղծում անհավասարության կամ խտրության հիմքեր՝ բազմապատկելով խոցելիությունը

«3R»-երի շրջանակ (rights, resources, representatinon) - իրավունքների, ռեսուրսների և ներկայացվածության հասանելիությունը. գենդերային հավասարության շրջանակ է, որը մշակվել է Շվեդիայում և լայնորեն կիրառվում է մարդու իրավունքների և զարգացման համատեքստերում: Իրավունքները կենտրոնանում են կանանց և մարգինալացված խմբերի համընդհանուր մարդու իրավունքների հարգման և պաշտպանության ապահովման վրա՝ առանց բռնության և խտրականության: Ռեսուրսները ներառում են բավարար ֆինանսական, տեղեկատվական և այլ ռեսուրսների հատկացում՝ գենդերային հավասարության հասնելու և կանանց լիազորելու համար: Ներկայացուցչությունը նպատակ ունի մեծացնել կանանց նշանակալի մասնակցությունը և ազդեցությունը հասարակության բոլոր մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում:

[1] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1
[2] Սեռահավասարության բառարան, ՄԱԶԾ, 2025:

Նախաբան

Հայաստանի վարչատարածքային միավոր հանդիսացող Լոռու մարզի քաղաքային և գյուղական համայնքները խիստ բազմազան են: Այդ համայնքներում կանանց մասնակցությունը հանրային կյանքին դրսևորվում է սոցիալ-տնտեսական, մշակութային և ենթակառուցվածքային գործոնների համատեղ փոխազդեցության արդյունքում:

Մարզի ներկայիս վիճակը ցայտուն կերպով արտացոլում է մի իրականություն, որտեղ հասարակական որոշ ոլորտներ ազդում են ոչ միայն անհատական՝ միկրո -, այլ նաև մետա- մակարդակներում՝ կանանց ինքնաիրացման համար ստեղծելով մշակութային և համակարգային սահմանափակումներ: Կրթության, զբաղվածության, առողջապահության, առաջնորդության, գենդերային հարաբերությունների և ճգնաժամային իրավիճակների ոլորտների խոչընդոտները տարբեր համայնքներում տարբեր են՝ կախված աշխարհագրական դիրքից, սոցիալ-տնտեսական պայմաններից, ռեսուրսների և ենթակառուցվածքների առկայությունից: Կարելի է ասել, որ կանանց տնտեսական և հասարակական գործունեությունը պայմանավորված է մի շարք համակարգային խնդիրներով, որոնցից գլխավորներն են՝ սոցիալ-տնտեսական վիճակը, կրթության մատչելիությունը, ենթակառուցվածքների հասանելիությունը, մշակութային կարծրատիպերը:

Այս համատեքստում իրականացված հետազոտությունը նպատակ ունի վեր հանելու Լոռու մարզի կանանց կարիքները՝ հենվելով մարդու իրավունքների, գենդերային հավասարության և ներառականության՝ «Ոչ ոքի չանտեսելով» սկզբունքների վրա:

Հենվելով ՍՀԽ-ի կողմից 2017-ին իրականացված հետազոտական զեկույցի[3] վրա՝ սույն հետազոտությունն առանձնանում է ոչ միայն իր ուրույն ոլորտային և թեմատիկ առանձնահատկությամբ, այլև մասնակիցների կողմից տրամադրված առաջարկությունների համապարփակ փաթեթով, որը նշանակալիորեն արժևորում է հետազոտության արդյունքները՝ այն դարձնելով ավելի կարիքահեն, ներառական, հարմարեցված և գործնականորեն կիրառելի:

Հետազոտությունն իրականացվել է 2025 թ. մարտ-հուլիս ամիսներին:

[3] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

Հետազոտության նպատակը, խնդիրները

Սույն հետազոտության առաջնային նպատակն էր՝ ձեռք բերել Լոռու մարզում բնակվող կանանց հիմնախնդիրների համապարփակ պատկերացում ՍՀԽ-ի կողմից սահմանված համատեքստում՝ ներառելով «3Ռ»-երի գենդերային հավասարության շրջանակը՝ իրավունքների, ռեսուրսների և ներկայացվածության հասանելիության վերաբերյալ: Այն ներառել է կանանց կյանքի վրա ազդող մարտահրավերների, հնարավորությունների, ընկալումների և սոցիալ-մշակութային դինամիկայի ուսումնասիրությունը, ինչպես նաև խոչընդոտների քարտեզագրումը, որոնք սահմանափակում են կանանց լիարժեք ինքնաիրացումը: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են գենդերազգայուն, գենդերային արձագանքող և գենդերային փոխակերպող, ինչպես նաև փոխհատականության (intersectionality) մոտեցումները: Այն կենտրոնացել է ՍՀԽ-ի կողմից նախանշված հետևյալ առանցքային ոլորտների վրա՝ կրթություն, աշխատանք/զբաղվածություն, առողջապահություն, քաղաքական մասնակցություն/առաջնորդություն, գենդերային հիմնախնդիրներ, ճգնաժամային իրավիճակների արձագանքում:

Հետազոտության նպատակների իրականացման համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

1) վերոնշյալ առանցքային ոլորտներում Լոռու մարզում բնակվող կանանց և աղջիկների կարիքների բացահայտում,

2) տվյալ ոլորտներում կանանց և աղջիկների ինքնաիրացմանը նպաստող և խոչընդոտող գործոնների վեր հանում,

3) տվյալ ոլորտներում հանդիպող խնդիրների շրջանակի բնութագրում, որոնց բախվում են Լոռու մարզում բնակվող կանայք և աղջիկները,

4) արձանագրված ոլորտային խնդիրների շրջանակի վերաբերյալ լուծումների ներկայացում, որոնք կարող են հաշվի առնվել ՍՀԽ-ի ռազմավարական պլանավորման մշակման ընթացքում:

Հետազոտության մեթոդաբանություն

Սույն հետազոտության ընթացքում կատարվել է որակական և քանակական մեթոդների համադրություն, որը հնարավորություն է ընձեռում ստեղծել առավել ամբողջական պատկեր: Որպես քանակական մեթոդ կիրառվել է հարցաթերթը, որպես որակական մեթոդ՝ առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցն ու Լոռու բնակչուհիների հետ ֆոկուս խմբային քննարկումները: Նման մեթոդաբանությամբ հետազոտությունը կանանց հիմնախնդիրներին անդրադառնում է գենդերային զգայուն պրիզմայի միջոցով՝ ապահովելով արժեքավոր տեղեկատվության հավաքագրում և տրամադրելով համապատասխան առաջարկների ուղենիշներ:

Տվյալների հավաքագրման մեթոդներ

Խորին հարցազրույցներ: Ընտրվել են կիսաստանդարտացված հարցազրույցներ՝ հարցվողների անհատական փորձառությունների խորությունն ու նրբությունները բացահայտելու համար: Լոռու մարզի կանայք հաճախ են բախվում անձնական և համատեքստին հատուկ մարտահրավերների, որոնք ոչ միշտ են արտացոլվում ստանդարտացված հարցումների միջոցով: Հարցազրույցները թույլ են տալիս մասնակիցներին կիսվել իրենց պատմություններով, մտքերով և փորձառությամբ՝ ապահովելով սեփական կարիքների ավելի լիարժեք ներկայացումը:

Ֆոկուս խմբեր: Ֆոկուս խմբային քննարկումները հատկապես արդյունավետ են կոլեկտիվ կարիքներն ուսումնասիրելու, մասնակիցների փորձառությունների վերաբերյալ որակական պատկերացումներ հավաքելու և առանցքային հարցերին առնչվող տեսակետների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Խմբային քննարկումները խթանում են համագործակցության զգացումը՝ խրախուսելով մասնակիցներին փոխանակվել գաղափարներով և փորձով: Ֆոկուս խմբերը կարող են ծառայել նաև որպես կանանց ինքնամոտիվացման հարթակ՝ սեփական մտահոգությունները բարձրաձայնելու և փոփոխությունների համար պայքարելու համար:

Հարցումներ: Կիսաստանդարտացված հարցաթերթի կիրառումը պայմանավորված էր մասնակիցների մեծ և բազմազան խմբերից քանակական տվյալներ հավաքելու անհրաժեշտությամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բացահայտելու Լոռու մարզում բնակվող տարբեր ժողովրդագրական խմբերի պատկանող և տարբեր համայնքներում բնակվող կանանց և աղջիկների կարիքներն ու հիմնախնդիրները:

Ընտրանք

Ընտրանքի համար ուշադրության կենտրոնում են եղել տարբեր ժողովրդագրական խմբերի կանայք և աղջիկներ՝ ներառյալ տարիքը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, կրթական մակարդակը և Լոռու մարզում զբաղեցրած աշխարհագրական դիրքը:

Խորին հարցազրույցներ: Խորին հարցազրույցի համար օգտագործվել է նպատակային ընտրանքը՝ ներգրավելու այն մասնակիցներին, որոնք ուղղակիորեն առնչվում են ուսումնասիրվող խնդիրներին և/կամ տեղյակ են դրանց մասին: Ընտրանքի այս ռազմավարությունը հաշվի է առնում Լոռու մարզի տարասեռությունը, որտեղ կանանց փորձը կարող է զգալիորեն տարբերվել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը՝ քաղաքային կամ գյուղական համայնք, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և տարիքը: Ըստ այդմ՝ առանցքային տեղեկատուներն ընտրվել են տարբեր համայքներից և տարբեր մասնագիտական տիրույթներից՝ ներառելով տվյալ հետազոտության գլխավոր առանցքային ուղղությունները. առողջություն, աշխատանք/զբաղվածություն, գենդերային հիմնախնդիրներ, կրթություն, քաղաքական մասնակցություն/ առաջնորդություն, ճգնաժամային իրավիճակների արձագանքում: Խորին հարցազրույցներն իրականացվել են Ալավերդի, Դեբեդ, Թումանյան, Մարգահովիտ, Սպիտակ, Ստեփանավան, Վանաձոր, Տաշիր համայքների 12 ներկայացուցիչների հետ:

Ֆոկուս խմբեր: Այս հետազոտության շրջանակում իրականացվել է 7 ֆոկուս խմբային քննարկում Ալավերդի, Թումանյան, Սպիտակ, Ստեփանավան, Վանաձոր, Տաշիր համայքներում: Մասնակից կանանց ընդհանուր թիվը՝ 66 հոգի:

Հաշվի առնելով հետազոտության փոխհատականության (intersectional) բաղադրիչը՝ ֆոկուս խմբային քննարկումներից մեկն իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող կազմակերպության շահառուների հետ: Մյուս խմբերում ներգրավված են եղել փոխհատականության տարբեր չափորոշիչներով բնութագրվող կանայք, այդ թվում նաև՝ տարեց, հաշմանդամություն ունեցող և Արցախից տեղահանված կանայք:

Հարցումներ: Հարցում իրականացնելու նպատակով առցանց տարածվել է կիսաստանդարտացված հարցաթերթ՝ քանակական տվյալներ հավաքելու համար: Բացի այդ, հաշվի առնելով կանանց որոշակի խմբի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման անհասանելիությունը, նրանց հետ իրականացվել են նաև դեմ առ դեմ հարցումներ նույն հարցաթերթով՝ տվյալ կանանց փորձառության պակասը համալրելու նպատակով: Հարցումը ներառել է փակ և բաց հարցեր՝ ուղղված այս հետազոտության առանցքային ոլորտների խնդիրներին, կանանց և

աղջիկների՝ դրանց հանդեպ ունեցած վերաբերմունքին և փորձին: Հարցմանը մասնակցել է Լոռու մարզի 425 բնակչուհի:



Գծապատկեր Ա:



Գծապատկեր Բ:



Գծապատկեր Գ:

Տարիքային բաշխվածություն: Մասնակիցների մեջ առավել ներկայացված էին 25-34 տարեկանները՝ 31%, որին հաջորդում էին 35-44 տարեկանները՝ 25% **(գծապատկեր Ա):**[4] 16-24 տարեկանները թիվը խմբում կազմում էր 19%, 45-54 տարեկաններինը՝ 12%: Ամենաքիչը ներկայացված էին 55-64 տարեկանները՝ 6%, և 65 ու բարձր տարիքի մասնակիցները՝ 7%:

Ամենամեծ թվով մասնակիցներ եղել են Սպիտակից (25%) և Վանաձորից (24%) **(գծապատկեր Բ):** Տաշիրի բնակչուհիների թիվը կազմել է 14%, Ալավերդունը՝ 13% և Ստեփանավանինը՝ 8%:

Հարցման ամենաքիչ մասնակիցները եղել են Թումանյան համայնքից՝ ընդամենը 1%:

Բացի այդ, հարցվածների մի մասը ներկայացրել է Լոռու մարզի տարբեր գյուղերը, որոնցից յուրաքանչյուրում արձանագրվել է մինչև տասնյակ մասնակցություն, ընդհանուր՝ 15%:

Մասնակիցների մեծամասնությունը ամուսնացած է՝ 62% **(գծապատկեր Գ):** 22%-ը նշել է, որ ամուրի է, 9%-ը՝ ամուսնալուծված, իսկ 7%-ը՝ այրի:

Հարցվածների շրջանում առավել մեծ թվով ներկայացված են տնային տնտեսուհիները՝ 19%, ինչպես նաև բազմազավակ մայրերը՝ 18% **(գծապատկեր Դ):** 11%-ը նշել է, որ գործազուրկ[5] է, 9%-ը՝ թոշակառու, հաշմանդամություն ունեցող անձ կամ ուսանող: Հարցվողների շրջանում միայնակ մայրերը կազմել են 8%, Արցախից տեղահանվածները, հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները՝ 3%:

[4] Բոլոր գծապատկերները ներկայացնում են հարցման մասնակիցների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

[5] Գործազուրկ եզրույթը բացատրվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված սահմանմամբ:



Գծապատկեր Դ:

Էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներ կազմել են հարցվողների ընդամենը 1%-ը: Բացի այդ, մասնակիցների 27%-ը նշել է «Այլ» տարբերակը՝ ներառելով աշխատող կանանց կամ մայրերին (18,6%), դպրոցականների (2,4%) և այլ խմբերի:

Տվյալների վերլուծություն

Որակական տվյալներ: Օգտագործվել է թեմատիկ վերլուծություն՝ հարցազրույցների և ֆոկուս խմբերի վերծանումներից կրկնվող թեմաներն ու օրինաչափությունները բացահայտելու համար: Վերլուծության մեջ ներառվել են տվյալների կոդավորումը և հետազոտության հարցերի հետ կապված արդյունքների մեկնաբանումը: Այս մեթոդը հնարավորություն է տվել հետազոտական գործընթացում բացահայտել կանանց մարտահրավերների և ձգտումների հիմքում ընկած այնպիսի պատճառներ, ինչպիսիք են մշակութային նորմերը, համակարգային խոչընդոտները:

Քանակական տվյալներ: Հետազոտության քանակական տվյալների վերլուծության համար օգտագործվել է վիճակագրական վերլուծության ծրագրակազմ՝ կենտրոնանալով նկարագրական վիճակագրության և հարաբերական վերլուծության վրա՝ տվյալների միտումներն ու փոխհարաբերությունները բացահայտելու համար: Մեթոդը հնարավորություն է տվել բացահայտել կանանց առջև ծառացած մարտահրավերների տոկոսը՝ դրանց մասշտաբը գնահատելու համար ապահովելով հստակ չափանիշներ:

Էթիկական նկատառումներ: Հետազոտության էթիկական կողմի խստորեն պահպանման համար առաջնահերթությունը տրվել է տեղեկացված համաձայնությանը և գաղտնիության ապահովման սկզբունքին, միևնույն ժամանակ չանտեսելով արդյունքների ամբողջականությունն ու հավաստիության ապահովումը: Բոլոր մաս-

նակիցներից վերցվել է տեղեկացված համաձայնություն՝ շեշտելով նրանց կամավոր ներգրավվածությունը և պատասխանների գաղտնիությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել անվտանգ և հարգալից միջավայրի ստեղծմանը՝ գիտակցելով, որ անձնական մարտահրավերների քննարկումը կարող է լինել չափազանց:

Ամփոփում

Լոռու մարզը, լինելով ՀՀ ամենամեծ մարզերից մեկը, ունի թե՛ քաղաքային, թե՛ գյուղական համայնքների մեծ բազմազանություն: Սոցիալ-տնտեսական հնարավորությունների բացակայությունը, աշխատատեղերի սակավությունը և մշակութային կարծրատիպերը, հատկապես՝ գյուղական համայնքներում, շարունակում են խոչընդոտել կանանց լիարժեք ինքնաիրացմանն ու հանրային կյանքին նրանց մասնակցությանը:

Չնայած կանանց կրթական մակարդակը հաճախ բարձր է, զբաղվածության ցուցանիշը մնում է ցածր: Խնդիրներն ակնառու են ինչպես առողջապահության, այնպես էլ առաջնորդության, քաղաքական մասնակցության, ընտանեկան հարաբերությունների, ճգնաժամային իրավիճակների արձագանքման և մյուս առանցքային ոլորտներում:

Կրթություն: Լոռու մարզում իրականացված կանանց կարիքների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ կրթական միջավայրը շարունակում է կրել ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ մշակութային և ենթակառուցվածքային սահմանափակումների ազդեցությունը: Չնայած որոշ համայնքներում բարձրագույն կրթության տարածվածությանը, այն չի ապահովում տնտեսական ինքնուրույնություն. կարճատև մասնագիտական ծրագրերի շրջանավարտները հաճախ վաստակում են ավելի շատ, քան բարձրագույն կրթությամբ կանայք: Կանայք ուսումը կիսատ թողնում են հիմնականում ամուսնության կամ ֆինանսական դժվարությունների պատճառով, և հետագայում գրեթե չեն վերադառնում ուսումնական գործընթացին: Երիտասարդների մասնագիտական կողմնորոշումը ձևավորվում է ֆինանսական հնարավորությունների, տեղական կրթական առաջարկի, ենթակառուցվածքային հասանելիության և գենդերային կարծրատիպերի համադրությամբ: Հատկապես խոցելի են հաշմանդամություն ունեցող կանայք, որոնք զրկված են կրթական հնարավորություններից ինչպես հարմարեցված ենթակառուցվածքների բացակայության, այնպես էլ կարծրատիպային վերաբերմունքի պատճառով:

Հետազոտության ընթացքում հստակ ընդգծվել է կրթության և ընտանեկան բռնության կանխարգելման միջև կապը: Ցածր կրթական մակարդակ ունեցող կանայք ավելի հաճախ են դառնում ընտանեկան բռնության վերապրողներ, և այս

իրավիճակը պայմանավորված է ոչ միայն բռնարարից ունեցած սոցիալ-տնտեսական կախվածությամբ, այլև սեփական իրավունքների և պաշտպանության մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկվածությամբ:

Աշխատանք/զբաղվածություն: Լոռու մարզի կանանց զբաղվածության ներկա պատկերը բնութագրվում է աշխատանքային հնարավորությունների սակավությամբ, անհամաչափ տարածքային բաշխվածությամբ և սոցիալ-մշակութային սահմանափակումներով: Չնայած վերջին տարիներին պետական և միջազգային ծրագրերի ակտիվացմանը, կանայք դեռևս բախվում են բազմաթիվ կառուցվածքային և մշակութային խոչընդոտների, որոնք սահմանափակում են աշխատաշուկայում նրանց մրցունակությունը: Արձանագրված խնդիրների մեծ մասը կապված է ոչ միայն աշխատատեղերի սահմանափակ հնարավորությունների, այլև կրթական համակարգի որակի, մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի հանդեպ հասարակական վերաբերմունքի հետ: Կանանց մեծ մասը շարունակում է մնալ սոցիալ-տնտեսապես ոչ ակտիվ կամ զբաղվածություն է որոնում ոչ պաշտոնական ու անպաշտպան պայմաններում: Խնդիրները խորանում են հատկապես այն վայրերում, որտեղ լրիվ բացակայում են արտադրական ենթակառուցվածքները և սոցիալական ծառայությունների համարժեք մատչելիությունը: Աշխատաշուկան մատչելի չէ մարզի բոլոր կանանց համար, հատկապես՝ գյուղաբնակների, երիտասարդների, ամուսնացած կամ երեխաներ ունեցող, ինչպես նաև՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար: Լոռու մարզում կանանց կրթության և զբաղվածության փոխկապակցված խնդիրները շարունակաբար ազդում են նրանց սոցիալ-տնտեսական դիրքի վրա: Այս համատեքստում կարևոր է դիտարկել, թե ինչպես կրթական և զբաղվածության քաղաքականությունները կարող են համադրվել՝ ապահովելով կանանց համար հավասար և կայուն մասնագիտական զարգացում:

Առողջապահություն: Լոռու մարզի առողջապահական համակարգում առկա են խորը կառուցվածքային և սոցիալ-մշակութային խնդիրներ, որոնք փոխկապակցված են բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի, մասնագիտական ռեսուրսների բաշխման, ինստիտուցիոնալ թերությունների և մշակութային կարծրատիպերի հետ: Կանանց առողջապահական կարիքների գնահատումը ցույց է տալիս, որ թեև առողջապահական ծառայությունները տարածքում մատչելի են, սակայն դրանց որակը, հասանելիության պայմանները և նպատակային ծրագրերի ծավալը բավարար չեն համայնքի կանանց բազմաբնույթ կարիքները հոգալու համար: Հատկապես գյուղական բնակավայրերում նկատվում է առողջության առաջնային պահպանման ծառայությունների սահմանափակ ընդգրկում, մասնագիտական կադրերի պակաս և ժամանակակից սարքավորումների բացակայություն: Առողջապահական խնդիր-

ները խորանում են սոցիալ-տնտեսական մարտահրավերներով, որոնք սահմանափակում են կանանց հնարավորությունները՝ ժամանակին և որակյալ բուժօգնություն ստանալու համար: Թեև առկա են որակյալ և նվիրված մասնագետներ, համակարգը դեռևս չի կարողանում բոլոր բնակիչների համար ապահովել հավասար և որակյալ հասանելիություն:

Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն: Լոռու մարզում կանանց քաղաքական ներգրավվածությունը դեռևս սահմանափակ է, հատկապես՝ համայնքի ղեկավարի պաշտոնում, որտեղ հիմնականում տղամարդիկ են ներկայացված: Չնայած կանայք օգտվում են քվոտայով սահմանված հնարավորություններից ավագանու անդամության մակարդակով, նրանց քաղաքական մասնակցության և կանանց հիմնախնդիրների օրակարգն առաջ տանելը բովանդակային և ակտիվ մասնակցությունը հաճախ կասկածի տակ է դրվում: Խոչընդոտներն ընդգրկում են հասարակական կարծրատիպերը, ընտանեկան աջակցության բացակայությունը, վարչական և լոգիստիկ դժվարություններ, ինչպես նաև քաղաքական գործընթացներում տղամարդկու դոմինանտ դիրքը: Միևնույն ժամանակ կանանց ներգրավվածությունը և առաջնորդության ձգտումը դրականորեն է գնահատվում, հատկապես, երբ նրանք ակտիվորեն օգտագործում են փափուկ հմտությունները: Հետազոտված հարցազրույցների համաձայն՝ կնոջ առաջնորդական հաջողության կարևոր նախապայմաններն են ինքնավստահությունը, հասարակական ու ընտանեկան աջակցությունը, ինչպես նաև կարծրատիպերի հաղթահարումը:

Գենդերային հիմնախնդիրներ: Գենդերային հիմնախնդիրները Լոռու մարզում արտահայտված են, հատկապես, ընտանեկան բռնության տարածվածությամբ, որը համայնքներում հաճախ համարվում է նորմալ: Բռնությունից ազատվելու հիմնական խոչընդոտներն են ֆինանսական կախվածությունն ու աջակցման համակարգի բացակայությունը: Բռնության վերաբերյալ տեղեկատվությունն ու աջակցությունը սահմանափակ են, իսկ բռնություն վերապրածները շատ հաճախ օգնության չեն դիմում սոցիալական ճնշումների ու վստահության պակասի պատճառով: Աջակցող մեխանիզմների բացակայությունը, հատկապես՝ գյուղական համայնքներում, խորացնում է կանանց խոցելիությունը:

Ամենաշատ խտրական վերաբերմունքի են արժանանում ամուսնալուծված կանայք: ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչներն իրենց աննկատ են պահում՝ բացասական վերաբերմունքի հետ առերեսվելուց խուսափելու համար: Արցախից տեղահանվածների և ազգային փոքրամասնությունների հանդեպ նկատելի է դրական վերաբերմունք, սակայն հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ վերաբերմունքը տարբեր է՝ զգայունից, անտարբերությունից մինչև ծայրահեղ ոչ զգայուն և

խտրական: Տարբեր սոցիալ-տնտեսական ու անձնական գործոնները մարզի տարբեր համայնքներում տարբեր կերպ են ազդում կանանց իրավունքների իրացման և ռեսուրսների հասանելիության վրա:

Ճգնաժամային իրավիճակների արձագանքում: Լոռու մարզի կանանց կյանքի որակի վրա արտակարգ և ճգնաժամային իրավիճակների ազդեցությունը հիմնականում բացասական է: Պատերազմների հետևանքով ընտանիքում կորուստ ունեցող կանայք շարունակական հոգեբանական ծանր ապրումների մեջ են: Ընդհանուր առմամբ՝ կանանց զգալի մասը առերեսվում է հոգեկան առողջության խնդիրների հետ: «Քովիդ-19» համավարակն աղետալի ազդեցություն է թողել սոցիալ-տնտեսական ոլորտում: Հատկանշական է, որ հարցվողների մի մասն էլ դրական փոփոխություններ է տեսել համաճարակով պայմանավորված հեռավար աշխատանքի և ուսման հնարավորությամբ: Դեբեդի վարարումն ու կլիմայական փոփոխությունները նույնպես վնասակար ազդեցություն են թողել կանանց տնտեսական գործունեության և առողջական վիճակի վրա: Արտակարգ իրավիճակներին արձագանքելու մեխանիզմների վերաբերյալ համայնքներում մեծ բացթողումներ կան, հատկապես՝ մեծահասակ կանանց շրջանում, որտեղ պատրաստվածության և կանխարգելման վերապատրաստումներ գրեթե չեն իրականացվում:

Հետազոտության հիմնական արդյունքները

Կրթություն

Լոռու մարզում կանանց և աղջիկների կրթական հնարավորությունները շարունակում են կրել մի շարք փոխկապակցված սոցիալ-տնտեսական, մշակութային և ենթակառուցվածքային գործոնների ազդեցությունը: Թեև, ըստ հետազոտության որակական մասն ապահովող տեղեկատուների, աղջիկների 90%-ը դպրոցն ավարտելուց հետո շարունակում է կրթությունը, այնուամենայնիվ առկա են որաշակի գործոններ, որոնք սահմանափակում են կանանց կրթության, հետագայում նաև՝ զբաղվածության և եկամտային հնարավորությունները՝ մեծացնելով սոցիալական խոցելիության և ընտանեկան բռնության ենթարկվելու ռիսկերը:

Կրթությունը հստակ հնարավորություն է ընձեռում տնտեսական ու սոցիալական ներառման համար, սակայն կրթական համակարգի և աշխատաշուկայի պահանջների միջև առկա է զգալի անհամապատասխանություն: Բարձրագույն կրթությունն ինքնին չի երաշխավորում եկամուտ, և հաճախ այն զիջում է կարճաժամկետ մասնագիտական դասընթացներին, որոնք ուղղակիորեն կապ ունեն շուկայի պահանջների հետ *(«Բարձրագույն ավարտած կինը ավելի քիչ ա վաստակում, քան մասնագիտական կուրսերի մասնակցած վարսավիրը»):* Ուստի, բարձրագույն կրթությունը Լոռու մարզի կանանց ընկալումներում միշտ չէ, որ կապվում է ֆինանսական կայունության և տնտեսական ինքնուրույնության հետ:

Աղջիկների մասնագիտական ընտրությունը հաճախ ձևավորվում է նախ ընտանիքի ֆինանսական հնարավորությունների, բուհի հասանելիության, ապա նաև՝ գենդերային կարծրատիպերի ազդեցության ներքո: Հատկապես գյուղական համայնքներում ավանդական պատկերացումները հաճախ հորդորում են ընտրել «կանանց համար հարմար» ընկալվող այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են մանկավարժությունը կամ բուժքույրական աշխատանքը, մինչդեռ լրագրության, իրավապահ համակարգի կամ ինժեներական մասնագիտությունների ընտրությունը երբեմն համարժեք չի ընկալվում: Հատուկ ուշադրության է արժանի գյուղական համայնքների կարծրատիպային միջավայրը, որտեղ ընտանիքի հանրային հեղինակությունը և սոցիալական վերահսկողությունը կարող են ուղղակիորեն ազդել աղջիկների կրթական և մասնագիտական ընտրության վրա: Օրինակ, եթե ընտանիքը համայնքում ունի բարձր վարկանիշ, աղջկա համար որոշ ոչ ավանդական մասնագիտություններ կարող են ավելի ընդունելի համարվել, մինչդեռ սոցիալապես պասիվ ընտանիքների աղջիկները նմանօրինակ ընտրության դեպքում բախվում են սուր քննադատության:

Մասնագիտությունների նորաձև լինելը ևս ազդում է երիտասարդների մասնագիտական ընտրության մոտիվացիայի վրա: Եթե մի ընթացք աղջիկների շրջանում մեծացել էր լեզուներին տրվող նախապատվությունը, ապա որոշ ժամանակ անց նորաձև է դարձել կառավարումը: Սա հանգեցնում է որոշ ոլորտների ծանրաբեռնվածությանը՝ սղություն առաջացնելով այլ մասնագիտական տիրույթներում:

Առանձնակի կարևորվում է ենթակառուցվածքների առկայությունը: Բարձրագույն ուսումնական հաստատության կամ համապատասխան տրանսպորտի բացակայությունը նշանակալի դեր են խաղում աղջիկների մասնագիտության ընտրության հարցում: Եթե ընտանիքի ֆինանսական միջոցները սուղ են, իսկ միջհամայնքային հանրային տրանսպորտը բավարար չի գործում, ապա աղջիկը մեծ հավանականությամբ ընտրություն կանի տվյալ համայնքում առաջարկվող ուսումնական ծրագրերի միջև: Սակայն այստեղ ևս աշխատանքի անցնելիս խնդիրներ են առաջանում, քանի որ տեղի գործատուները նախապատվությունը տալիս են ավելի մեծ քաղաքներում կրթություն ստացածներին՝ թերահավատորեն վերաբերվելով տվյալ համայնքի ուսումնական կառույցներում ստացած գիտելիքներին:



Գծապատկեր 1:

Միաժամանակ առցանց և դեմ առ դեմ հարցվածների մեծամասնությունը՝ 76,9%, նշել է, որ ստացել կամ ստանում է իր ցանկացած կրթությունը, իսկ 23,1%-ը՝ չի համաձայնել այդ մտքի հետ **(գծապատկեր 1):**



**Գծաաատեեե

աշխատաշուկայում տեղ զբաղեցնելուն: Հարցվողների 5,5%-ն է գնահատել իրենց համայնքների կանանց կրթության որակը ցածր (2), և միայն 1%-ն է այն համարել ծայրահեղ ցածր (1):

Մասնագիտական ընտրության վրա ազդում է նաև գործնական կողմը: Երիտասարդների մի մասը չի պատրաստվում երկարաժամկետ ուսում ստանալ, քանի որ այն պահանջում է ժամանակ և ռեսուրսներ: Նախընտրելի են կարճաժամկետ՝ 3-6 ամիս տևողությամբ դասընթացները, որոնք թույլ են տալիս արագ մուտք գործել աշխատաշուկա և ապահովել համեմատաբար բարձր եկամուտ: Հատկապես փոքր քաղաքներում, միջին աշխատավարձը համարվում է «լավ» եկամուտ, ինչը ձևավորում է մասնագիտության ընտրության մոտեցումը:



Գծապատկեր 3:

Ըստ քանակական տվյալների **(գծապատկեր 3)**՝ Լոռու մարզում կանանց կրթության հիմնական որոշիչ գործոններ են ընտանիքի ֆինանսական հնարավորությունները, որոնք կարևորել է մասնակցիներ 26%-ը, ընտանիքի կողմից կրթության արժեքավորումը՝ 25%, ինչպես նաև սովորելու անկեղծ ցանկությունը, որը նշել է մասնակիցների 22%-ը: Հատկանշական է, որ ուսումնական կենտրոնների առկայությունը կարևորել է մասնակիցների 13%-ը, տրանսպորտի առկայությունը՝ 11%-ը: Մասնակիցներից 2%-ը նշել է, որ դժվարանում է որոշել հիմնական խոչընդոտները, իսկ 1%-ն ընդգծել է այլ պատճառներ. օրինակ՝ հասարակական սովորությունները, աշխատանքի ցանկությունը և կանանց ինքնուրույնության աստիճանի բարձրացումը:

Հարկ է նշել, որ Լոռու մարզում գործող կարճաժամկետ մասնագիտական դասընթացները, որոնք հաճախ իրականացվում են տեղական կամ միջազգային ծրագրերի շրջանակներում, կայուն արդյունք չեն ապահովում: Չնայած կանանց ակտիվ մասնակցությանը տարատեսակ կարճաժամկետ դասընթացներին, դրանց շարու-

նակականությունը և կիրառական արդյունքը հաճախ բացակայում է: Կանանց մի մասը նշում է, որ դասընթացների ավարտից հետո մասնակիցների նոր հմտությունները գործնական կիրառություն չեն գտնում՝ շուկայի սահմանափակ հնարավորությունների, ֆինանսական աջակցության և մենթորության բացակայության պատճառով: Բացի այդ, տվյալ հնարավորությունների մասին տեղեկատվության հասանելիությունը սահմանափակ է հատկապես ամենաշատ պահանջ ունեցողների համար, և «Ոչ ոքի չանտեսելով» (Leave no one behind) մոտեցումը ոչ միշտ է կիրառվում:



Գծապատկեր 4:

Իրենց համայնքներում կանանց կրթությանն աջակցող ծրագրերի կամ նախաձեռնությունների առկայությունը հարցվածների մեծամասնությունը՝ 65%, հաստատել է, մինչդեռ 35%-ը նշել է, որ նման ծրագրեր չկան **(գծապատկեր 4):**

Այսինքն կանանց 1/3-ից փոքր ինչ ավելին դուրս է մնում կրթական հնարավորություններից: Նման ծրագրերի արդյունավետությունը հիմնականում գնահատվել է միջին, լավ և գերազանց արդյունավետ **(գծապատկեր 5):** Մասնակիցների 38%-ը դրանք համարել է միջին արդյունավետ, 26%-ը՝ արդյունավետ, իսկ 18%-ը գերարդյունավետ: Միաժամանակ, հարցման մասնակիցների երկու խումբ՝ 9-ական %, դրանք գնահատել են համապատասխանաբար ծայրահեղ անարդյունավետ և անարդյունավետ:



Գծապատկեր 5:

Կանանց կրթական ուղին հաճախ ընդհատվում է ամուսնության կամ ֆինանսական խնդիրների պատճառով: Այսպիսի ընդհատումից հետո վերադառնալու մոտիվացիան գրեթե բացակայում է: Ուսման շարունակման հնարավորությունը հազվադեպ է օգտագործվում, ինչը պայմանավորված է ինչպես սոցիալական սպասումներով *(«ամուսնացած կինն առաջինը պետք է ընտանիքի մասին հոգա»),* այնպես էլ ֆինանսական դժվարություններով:

Հատկապես սահմանափակ են հաշմանդամություն ունեցող կանանց կրթական հնարավորությունները: Չնայած որոշ ուսումնական հաստատություններ պատրաս-

տակամություն են ցուցաբերում դասերը կազմակերպելու այդ դիմորդների կարիքներին հարմարեցված պայմաններով, այնուամենայնիվ ֆիզիկական միջավայրի ամբողջական հարմարեցման բացակայությունը, հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ հանրային կարծրատիպերը, համընդհանուր թերահավատությունը՝ *«մյուսները սովորելով չեն կարողանում աշխատանք գտնել, նա ի՞նչ է անելու իր սովորածով»* և աշխատանքային շուկայում ակնկալվող խոչընդոտները հանգեցնում են նրան, որ այս խմբի կանայք քիչ են դիմում բուհեր կամ ուսումնական կենտրոններ:

Բուհական կրթություն ստանալու ևս մեկ խոչընդոտ է չհարմարեցված տրանսպորտը:

Հաշվի առնելով ցկյանս ուսումնառության կարևորությունը՝ տարեց կանանց կրթական կարիքները ևս հավուր պատշաճի չեն բավարարվում, թեև նրանց մեծամասնությունն ֆորմալ կրթական պրոցեսում իրեն ներգրավված չի տեսնում: Ավելի մեծ հավանականությամբ նրանք կմասնակցեին ոչ ֆորմալ ֆորմատով առաջարկվող ծրագրերին: Ըստ հետազոտության խորին հարցազրույցի մասնակիցների՝ տարեց, ինչպես նաև միջինից բարձր տարիքի կանայք ունեն մեդիագրագիտության ռեալ խնդիր: Նախ՝ նրանք ավելի քիչ են օգտվում համացանցից, քան այլ տարիքային խմբերի կանայք և երկրորդ՝ նրանք համացանցի տեղեկատվության նկատմամբ ունեն մեծ վստահություն, քննադատորեն չեն մոտենում ստացված տեղեկատվությանը:

Ազգային փոքրամասնությունների շրջանում կրթության արժևորումը ևս մեծ խնդիր է: Մոլոկանների և եզդիների համայնքներում կրթության նկատմամբ մոտիվացիան ցածր է, հատկապես՝ բարձրագույն կրթության առումով: Լեզվական խոչընդոտները, մասնավորապես հայերենի անբավարար իմացությունը, ինչպես նաև իրենց մայրենի լեզվով համապատասխան կրթական ծրագրերի բացակայությունն ավելի են խորացնում այս խնդիրները: Սակայն նրանց համայքներում կանանց կրթություն ստանալու ամենամեծ խոչընդոտն աղջիկների վաղ ամուսնության ազգային սովորույթն է՝ *«Դեռ դպրոցը չավարտած ամուսնացնում են, ու էլ չի գնում դպրոց»:* Այլ է պատկերը հունական համայնքներում. այստեղ հիմնականում ձգտում են կրթվել և աշխատանք գտնել, ունեն կրթական մշակութային կենտրոն, որին հաճախում են նաև հայեր:

Լոռու մարզում կանանց համար կրթություն ստանալու հիմնական նպաստող գործոններն են ընտանիքի ֆինանսական բարեկեցությունը/հնարավորությունները, ընտանիքում կրթության արժևորումը, աշխատանք գտնելու և լավ ապրելու ձգտումը, ինքնահաստատվելու, ինքնահիրացվելու լավագույն նախապայմանը կրթությունը համարելը: Ըստ վերջին միտումների՝ այժմ ավելի շատ աղջիկներին են

կրթության շարունակման հնարավորություն տալիս, որպեսզի հետագայում, անկախ իրենց կարգավիճակից, կարողանան կայունություն ունենալ իրենց կյանքում:



Գծապատկեր 6:

Հարցվողների գրեթե կեսը՝ 49%, կարծում է, որ համայնքում բարձրագույն կրթություն ավելի շատ ստանում են աղջիկները **(գծապատկեր 6):** 32%-ը գտնում է, որ կրթության նախապատվությունը երկու սեռերի մոտ հավասար է: 17%-ը չգիտի, թե որ կողմն է առավել, և միայն 1%-ն է նշել, որ գերակշռում են տղաները:

Ըստ էության կանանց և աղջիկների համար կրթության իրավունքն իրացնելու ֆորմալ սահմանափակում չկա: Նրանք շատ ազատ են դիմելու համալսարան, մասնակցելու ընդունելության քննություններին կամ հաճախել ոչ ֆորմալ դասընթացների:

Հարկ է նշել, որ ոչ ֆորմալ կրթությունը հիմա նույնպես կարևորվում է որոշ մասի կողմից: Հիմնականում դա ավելի շատ պրակտիկ հմտություններ է տալիս, քան համալսարանական կրթությունը:

Ըստ խորին հարցազրույցի որոշ մասնակիցների՝ վերջին տարիներին պետական ծրագրերի շնորհիվ աղջիկների մուտքը դեպի ավանդաբար «տղամարդկային» համարվող մասնագիտություններ աստիճանաբար սովորական երևույթ է դարձել: Եթե գյուղական հեռավոր համայնքներում դեռ հանդիպում են մասնագիտական ընտրությունը սեռային պատկանելիությամբ սահմանափակող կարծիքներ, ապա հասարակության լայն շերտերում արդեն ձևավորվում է այն ընկալումը, որ կենսապահովման և հաջողության հասնելու համար սեռը որոշիչ գործոն չէ: Կանայք ավելի անկախացել են, ձեռք բերել հմտություններ քաղաքական, կրթական, բիզնես և հասարակական ոլորտներում և կարողանում են զբաղեցնել հասարակության մեջ կարևոր և տեսանելի դիրք: Նման զարգացումների համար նպաստավոր են նաև մասնագիտական վերապատրաստման և վերապրոֆիլավորման ծրագրերը, որոնք հաճախ ուղղված են հատկապես կանանց: Որոշ ոլորտներում կանանց հզորացման ծրագրերը նույնիսկ բացահայտ խորացրել են կանանց և տղամարդկանց գիտելիքների տարբերությունը: Դա առանձնակի նկատելի է հատկապես հանրային կառավարման ոլորտում:



Գծապատկեր 7:

Հարցվածների մեծամասնությունը՝ 60%, նշել է, որ համայնքում կարծրատիպային կարծիքը բացակայում է **(գծապատկեր 7):** Որոշները կարծում են, որ, այնուամենայնիվ, պահպանվել են որոշակի կարծրատիպեր. *«աղջկա սովորելն ո՞ւմ է պետք, հետո ուրիշի տուն է գնալու»* (14%), *«տուն պահողը տղան ա, նրան ա պետք կրթության տալ»* (8%), ինչպես նաև *«աղջկա սովորածը կորչելու ա տան գործերի մեջ»* (7%): Խիստ քիչ են այն անձինք, որոնք կարծում են, թե *«աղջիկը բավարար խելք չունի համալսարան գնալու համար»* (1%): Բացի այս, 10%-ը նշել է «Այլ» տարբերակը, որտեղ ընդգրկվել են՝ կարծրատիպերի նվազում, կրթության հավասար արժևորում աղջիկների և տղաների համար, աշխատանք գտնելու դժվարությունները բարձրագույն կրթություն ստացածների շրջանում, ինչպես նաև անհատական մոտեցումները: Այս բոլորն էլ վկայում են այն մասին, որ համայնքի վերաբերմունքը աղջիկների կրթության հարցում աստիճանաբար փոխվում է, դառնում ավելի բաց ու առաջադեմ:



Գծապատկեր 8:

Կանայք հազվադեպ են դիմում իրավական մարմիններին՝ իրենց կրթական իրավունքների պաշտպանության համար: Պատճառներից են՝ իրավունքների ոտնահարման ընկալման բացակայությունը և իրավական գործընթացների նկատմամբ անվստահությունը: Արդյունքում՝ հաճախ գերակշռում է պասիվ դիրքորոշումը:

Հարկ է նշել, որ կրթական բացերի համալրման առումով առավել ընդգծվել է մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների մեծ պահանջ (24%): **(գծապատկեր 8),** որին հաջորդում են

փափուկ հմտությունների (22%), ձեռնարկատիրության (21%) ոլորտների գիտելիքների կարիքները:

Գյուղատնտեսության և ճգնաժամային կառավարման ոլորտների նկատմամբ հարցման մասնակիցների կողմից կա հավասար հետաքրքրվածություն՝ 11-ական տոկոս, իսկ 9%-ը նշել է, որ չեն կարողացել նշել անհրաժեշտ ուղղությունները: 2%-ի դեպքում «Այլ» կատեգորիայի ներքո ընդգրկվել են տարբեր առաջարկություններ՝ հաշմանդամ երեխաների մոր աջակցության ծրագրեր, ավելի շատ ծրագրեր Արցախի կանանց համար, հաշվապահական, սպորտի, ծրագրավորման և այլ ոլորտների ծրագրեր: Կային նաև նկատառումներ՝ կապված արդեն առկա ծրագրերի բազմազանության և գործունեության հետ:

Կրթության բացակայությունը նաև կապվում է ընտանեկան բռնության բարձր ռիսկի հետ. վաղ ամուսնացող և կրթություն չունեցող կանայք ավելի հաճախ են հակված ենթարկվելու ընտանեկան բռնության: Այս դիտարկումը վկայում է կրթության դերի կարևորությունը ոչ միայն տնտեսական, այլև անձնական անվտանգության և իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Այսպիսով, Լոռու մարզում կանանց կրթական իրավիճակը ձևավորվում է բազմաշերտ և փոխկապակցված խնդիրների ազդեցությամբ: Համայնքային մակարդակում պահանջվում են համալիր մոտեցումներ, որոնք միաժամանակ կանդրադառնան գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ուսուցմանը, կրթության հասանելիության ենթակառուցվածքային բարելավմանը և կրթության արժեքի մասին իրազեկման բարձրացմանը՝ հատկապես ընդգծելով դրա դերը կանանց սոցիալական և տնտեսական հզորացման, ինչպես նաև ընտանեկան բռնության կանխարգելման գործում:

Աշխատանք/զբաղվածություն

Լոռու մարզի կանանց զբաղվածության հարցն ունի բազմաշերտ բնույթ: Այն ներառում է տնտեսական, աշխարհագրական դիրքի, սոցիալ-մշակութային և գենդերային ազդեցությունների ողջ շրջանակը: Թեև պետական և միջազգային ծրագրերի շնորհիվ առկա են որոշ հնարավորություններ, այնուամենայնիվ կանանց մեծամասնության համար աշխատաշուկան շարունակում է մնալ սահմանափակ, ոչ մատչելի և հաճախ՝ խոցելի պայմաններով: Խնդիրները խորանում են հատկապես գյուղաբնակ համայնքների կանանց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կանանց, ազգային փոքրամասնությունների, երիտասարդ և երեխաներ ունեցող կանանց շրջանում:

Ընդհանուր առմամբ, կանանց տնտեսական ակտիվության մակարդակը մնում է ցածր՝ պայմանավորված ինչպես աշխարհագրական դիրքից բխող անհավասարու-

թյամբ և ենթակառուցվածքային գործոններով, այնպես էլ հասարակությունում պահպանվող գենդերային կարծրատիպերով և ավանդույթներով, որոնք դեռևս որոշ առումով շարունակում են սահմանափակել կանանց մասնագիտական ընտրության և զարգացման հնարավորությունները: Աշխատաշուկայի արդի միտումների, մասնավորապես՝ առցանց աշխատանքի հնարավորությունների չիմացությունը, մասնագիտական կողմնորոշման պակասը, մասնագիտական կրթության սահմանափակ հնարավորությունները՝ ի լրումն երեխաների խնամք ապահովող կառույցների ոչ բավարար հնարավորությունների՝ մեծ ազդեցություն ունեն Լոռվա կանանց զբաղվածության վրա:

Լոռու մարզում բարձրագույն կրթությունը հաճախ չի դիտարկվում որպես տնտեսական ինքնուրույնության հուսալի հիմք: Հարցազրույցներից ստացված տվյալները վկայում են, որ կրթական համակարգում ստացած գիտելիքները հաճախ չեն համընկնում աշխատաշուկայի պահանջների հետ, իսկ գործնական հմտությունների պակասը նվազեցնում է շրջանավարտների մրցունակությունը:

Աշխատաշուկայում կանանց հանդիպող մարտահրավերները խիստ բազմազան ու բազմաշերտ են: Այստեղ ներառվում են թե՛ գործատուների բարձր պահանջները, թե՛ աշխատանք փնտրողների գիտելիքների և հմտությունների պակասը կամ լրիվ բացակայությունը, թե՛ ցածր աշխատավարձերը, որոնք շատ հաճախ բավարար չեն, որպեսզի աշխատելու ցանկության առումով մոտիվացնեն կանանց: Այնուամենայնիվ, աշխատել ցանկացող կանանց թիվը գերազանցում է աշխատատեղերի թվին: Ըստ խորին հարցազրույցի որոշ մասնակիցների՝ մոտ 70% կանայք աշխատանք չունեն արտադրությունների, ձեռնարկությունների, փոքր ու միջին բիզնեսի բացակայության պատճառով: Ընդ որում նրանք կարծում են, որ աշխատատեղերի խնդիր ունեն թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ:



Գծապատկեր 9:

Հարցվածների կեսից ավելին՝ 59%, համարում է, որ կանանց համար աշխատաշուկայում կան հավասար հնարավորություններ, մինչդեռ 41%-ը հակառակ կարծիք ունի դրա վերաբերյալ **(գծապատկեր 9):**

Կանանց համար աշխատատեղերի հնարավոր սպեկտրը տարածվում է հիմնականում պետական կառույցներում ադմինիստրատիվ աշխատանքների, կրթական կառույցների մանկավարժական հաստիքների և ծառայությունների մատուցման ոլորտի որոշ արտադրամասերի

վրա՝ կարի ֆաբրիկաներ, կաթի արտադրամասեր, հացի փռեր: Այստեղ էլ խորին հարցազրույցի որոշ մասնակիցներ նշել են բռնության և շահագործման դեպքերի մասին, սակայն կանայք, անելանելիությունից դրդված, շարունակում են աշխատել այդ միջավայրերում: Նոր միտում կա նաև տուրիզմի ոլորտի զարգացման առումով, որում գերազանցապես ներգրավված են կանայք:

Կարևորագույն հարցերից է կանանց ու երիտասարդների՝ աշխատաշուկայում անմրցունակ լինելու հանգամանքը: Նրանք նույնիսկ չեն պատկերացնում իրենց հնարավորությունների շրջանակը. ունենալով, ասենք, կառավարման ոլորտի բարձրագույն կրթություն, կարող են ցանկություն հայտնել մանկավարժ աշխատելու: Քիչ թվով կանայք, աշխատելուն զուգահեռ, անընդհատ ինքնակրթվում ու զարգանում են: Մեծ չէ նաև այն կանանց թիվը, որոնց հմտությունների ու գիտելիքի պաշարը բավարար է առցանց աշխատանք գտնելու կամ ավելի բարձր վարձատրվող տեղերում աշխատելու համար: Տարիքը ևս զգալի խոչընդոտ է Աշխատաշուկայում տեղ գտնելու առումով զգալի խոչընդոտ է նաև տարիքը. երիտասարդ կանայք ու աղջիկները 50 + տարիքի կանանցից ավելի մրցունակ են:

Մյուս խոչընդոտներից մեկը՝ Լոռվա մարզում տրամադրվող մասնագիտությունների կամ ուսումնական հնարավորությունների ոչ արդիական և աշխատաշուկայի կարիքներին չհամապատասխանող, սակավ մրցունակ մասնագիտությունների տրամադրումն է: Այդ պատճառով հարցվողների զգալի մասը նշել է ավելի արդիական ոլորտներում մասնագիտանալու կամ վերարակավորվելու ցանկության մասին: Շուրջ 16,5%-ը նշել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտանալու ցանկության մասին, ինչը հաստատում է կանանց կյանքի վրա տեխնոլոգիական զարգացումների ազդեցության փաստը **(գծապատկեր 10):**



Գծապատկեր 10:

Դրան հաջորդում է նույն քանակի հարցվողների՝ 12-ական տոկոսի հետաքրքրությունը ավանդաբար՝ առողջապահության ոլորտի և բոլորովին նոր՝ զբոսաշրջության հանդեպ: Բացի այդ, հետաքրքրություն կա նաև կրթության (11%), տնտեսագիտության (10%) և մշակույթի (7%) ոլորտների հանդեպ: Սպասարկման ոլորտում իրեն տեսնում է հարցվողների 9%-ը: Հարկ է նշել, որ հարցման ոչ բոլոր մասնակիցներն են ցանկություն հայտնել մասնագիտանալ. 5%-ը նշել է, որ չի ուզում վերապատրաստվել, 3%-ն ընտրել է «Այլ» տարբերակ՝ այդ թվում մարքեթինգ, լրագրություն և իրավաբանություն: Ամենաքիչն ընտրվել է էներգետիկայի ոլորտը՝ 0,5%:

Մեկ այլ խնդիր է միայն մեծ համայնքներում ուսումնական հաստատությունների առկայությունը: Ինչպես նշվել է «Կրթություն» բաժնում՝ ոչ բավարար ենթակառուցվածքների, մասնավորապես՝ տրասնպորտի սակավության պատճառով գյուղական համայնքների աղջիկների որոշ մասը կաշկանդվում է դիմել քաղաքային համայնքների բուհեր: Այսպիսով՝ համալսարանների կենտրոնացվածությունը մեծ քաղաքներում նույնպես սահմանափակում է տեղական աշխատաշուկայում կանանց մրցունակությունը :

Այնուամենայնիվ, բարձրագույն կրթությամբ կանանց թիվը մեծ է, և նրանք աշխատաշուկայում տեղ գտնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն: Բայց նրանցից շատերն էլ սովորելուց հետո սովորաբար ամուսնանում են: Եվ մինչ երեխաներին մեծացնելը՝ տևական ժամանակահատված դուրս են մնում աշխատաշուկայից: Հետևաբար մյուսները փորձ են ձեռք բերում աշխատաշուկայում, իսկ իրենք աստիճանաբար սկսում են զիջել իրենց մրցունակությամբ. մոռանում են սովորածը, գիտելիքներն ու հմտությունները թարմացնելու կարիք են ունենում, որի համար շատ հաճախ հնարավորություններ չեն գտնում: Որոշ համայնքներում կանանց աշխատելուն դեմ են ամուսինները: Պատահում է, որ կանայք ամուսինների արգելքն օգտագործում են որպես պատրվակ՝ «հարմարավետ գոտուց» դուրս չգալու համար:

Սոցիալապես անապահով ընտանիքներում կանայք հազվադեպ են հաջողում բարձրագույն կրթություն ստանալ, իսկ միջնակարգ կրթություն ունեցողները արդի աշխատաշուկայում մրցունակ չեն: Նրանց մի մասը հիմնականում փորձում է տարբերակներ գտնել սպասարկման ոլորտում: Կանանց մի զգալի մասը նախընտրում է ոչ թե աշխատել, այլ օգտվել պետության աջակցությունից ու առողջապահական արտոնություններից:

Ազգային փոքրամասնությունների դեպքում սահմանափակումները պայմանավորված են սեփական համայնքների ավանդական մոտեցումներով, բայց ոչ՝ խտրականությամբ: Մոլոկանները զբաղվում են գյուղատնտեսությամբ, հիմնականում ինքնազբաղված են և իրացնում են սեփական արտադրանքը: Նրանցից որոշները մեծ

քաղաքներում մաքրության ծառայություններ են մատուցում: Եզդիական համայնքներում կրթությունը մեծամասամբ չեն կարևորում, անգամ այլ աշխատանքների հավակնություն էլ չունեն. զբաղվում են գյուղատնտեսությամբ զբաղվողներին գումարով աջակցմամբ կամ փողոցային մաքրության ապահովմամբ:

Հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում հատուկենտ են աշխատանք ունեցողները: Հատկապես տեղաշարժման խնդիր ունեցող կանայք ընդհանրապես չեն կարողանում աշխատանք գտնել:

Բազմաթիվ կանայք տեղեկացված չեն պետական կամ միջազգային կազմակերպությունների ծրագրերի մասին: Կանանց համար դժվար է կողմնորոշվել՝ ինչ մասնագիտություն կամ ոլորտ ընտրել, որտեղ վերապատրաստվել կամ ինչպես սկսել սեփական ձեռնարկատիրական գործունեությունը:

Լոռիում կանանց աշխատանքի տեղավորման խոչընդոտների թվում հարցվողների կողմից մեծամասամբ նշվում են աշխատատեղերի բացակայությունն ու ցածր աշխատավարձը՝ 20%, երեխաների խնամքի կազմակերպման դժվարությունները՝ 17%, երկար աշխատաժամերը՝ 12% և տրանսպորտի սահմանափակ հնարավորությունները՝ 9% **(գծապատկեր 11):** Որպես կանանց՝ աշխատաշուկայում ներգրավվածության խոչընդոտ, հարցվողների 7%-ը կարևորել է նաև գործատուների կողմից իրավունքների ոտնահարումը, վատ աշխատանքային պայմանները՝ 6%, գործատուի կողմից կանանց հմտությունների և կրթության թերագնահատումը համապատասխանաբար՝ 5% և 4% :



Գծապատկեր 11:

Ըստ խորին հարցազրույցի որոշ մասնակիցների՝ տեղական ձեռներեցներից ոմանք կանանց աշխատանքի ընդունելու հարցում առաջնային են համարում տվյալ

ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, այլ ոչ թե կանանց արտաքինը: Ընդգծված կերպով աշխատանքի են ընդունում բազմազավակ մայրերի, աջակցության կարիք ունեցողների: Որոշ գործատուներ խթանում են իրենց աշխատակիցների մասնագիտական աճը, նույնիսկ ֆինանսավորում են այն: Սակայն կան նաև գործատուներ, որոնք հստակ ընդգծում են՝ երեխաների խնամքի համար արտոնություններն ու նրանց կարիքների համար թույլտվությունները չեն խրախուսվում: Այդ պատճառով շատ հաճախ չեն կաշկանդվում հարցազրույցի ընթացքում ճշտել կնոջ ամուսնական կարգավիճակը: Նոր ամուսնացածներին բացահայտ կերպով չեն մերժում, սակայն ներքին կարգով դադարում են դիտարկել որպես տվյալ հաստիքի թեկնածու:

Լինում են դեպքեր, որ տվյալ համայնքի գործատուն անտարբեր է համայնքի հնարավորությունների նկատմամբ. դպրոցների մեծամասնությունում որպես օտար լեզու դասավանդվում է գերմաներենը, սակայն նրանք, աշխատաշուկայի նոր միտումից ելնելով, դնում են անգլերեն լեզվի իմացության պահանջ:

Տեղական բիզնեսների կողմից կանանց, հատկապես՝ ընտանիք ունեցողների աշխատանքի ընդունման հարցում աջակցությունը միջին է գնահատել հարցման մասնակիցների 41%-ը: 13%-ը կարծում է, որ աջակցությունը լավ մակարդակի է, իսկ 11%-ը՝ գերազանց:



Գծապատկեր 12:

Միաժամանակ, 14%-ը կարծում է, որ աջակցությունն իսպառ բացակայում է, 21%-ը՝ որ կա որոշակի աջակցություն **(գծապատկեր 12):**

Ի լրումն վերոնշյալի՝ դիտարկվում են նաև զբաղվածության ոլորտում առկա կարծրատիպային խոչընդոտները, որոնք սահմանափակում են կանանց՝ տվյալ ոլորտում ինքնաիրացման հնարավորությունները: Դրանք հատկապես ընդգծվել են գյուղական համայնքներում և վերաբերում են գերազանցապես ուժային կառույցներում կանանց ներգրավմանը, ձեռներեցությամբ զբաղվելուն, առաջնորդական և որոշումներ կայացնող դիրքեր զբաղեցնելուն և սպասարկման ոլորտի որոշ աշխատանքներին: Օրինակ՝ քիչ են հանդիպում ամուսնացած կանայք, որոնք համաձայնում են մատուցողուհի աշխատել:



Գծապատկեր 13:

Հարցվածների կեսից ավելին՝ 55%-ը նկատել է, որ զբաղվածության ոլորտում կան կարծրատիպային խոչընդոտներ, որոնք սահմանափակում են կանանց աշխատանքային իրավունքների իրացումը, մինչդեռ 45%-ը նման խոչընդոտներ չի նկատել (**գծապատկեր 13):**

Թեև վերջին մի քանի տարվա ընթացքում մոտեցումները փոխվել են՝ պայմանավորված կին առաջնորդների ակտիվությամբ և լավագույն օրինակների դրսևորումներով, սակայն մարտահրավերներից մեկն էլ այն է, որ կոնկրետ որևէ հաստիքի համար նախապատվություն տրվում է արական սեռի ներկայացուցիչներին: Այսինքն՝ որքան էլ միտումները տանում են դեպի հավասար հնարավորություններ, միևնույն է, այդ կարծրատիպը դեռ որոշակիորեն շարունակում է գործել:

Թեև խորին հարցազրույցի բոլոր մասնակիցները դրական էին վերաբերվում կնոջ՝ տան տղամարդուց ավելի շատ վաստակելու հանգամանքին, սակայն պնդում էին, որ դա հոգեբանական լուրջ խնդիրներ կարող է առաջացնել տղամարդու մոտ և կնոջը՝ թեև ակամա, դարձնել արտոնյալ: Ու եթե դա համակարգային բնույթ է կրում, կարող է վեճերի պատճառ դառնալ, ընդհուպ՝ մինչև ամուսնալուծության: Նման դեպքերում տղամարդն իրեն այդ առումով ինքնավստահ չի զգում ու սկսում է փոխհատուցել ոչ թե ավելի լավ վարքով, այլ ընդհակառակը՝ բռնության տարբեր դրսևորումներով:



Գծապատկեր 14:

Կնոջ՝ տան տղամարդուց շատ վարձատրվելու հարցում կարծիքները բաշխվել են տարբեր կերպ. 43%-ն ունի խիստ դրական վերաբերմունք, 26%-ը՝ դրական, 17%-ը՝ չեզոք: Միաժամանակ, դրան խիստ բացասաբար է վերաբերվում հարցվողների 8%-ը բացասաբար՝ 6%-ը: **(գծապատկեր 14):**

Այստեղից կարելի է եզրակացնել, որ կանանց զգալի մասն սկսել է կարևորել ինքնուրույն ռեսուրսներ ձեռք բերելու հանգամանքը:

Կանանց՝ իրենց աշխատանքային իրավունքներին իրազեկությունը հարաբերական է: Հատկապես ոտնահարվում են աշխատաժամերին չհետևելու, պատշաճ չվարձատրելու, արձակուրդ չտրամադրելու, աշխատողին չգրանցելու իրավունքները: Վերջինս հաճախ լինում է գործատուի հետ փոխադարձ համաձայնությամբ, քանի որ շատ նպաստառու կանայք չեն ցանկանում զրկվել պետության կողմից տրամադրվող նպաստից:

Հատկապես ընդգծվել է կարի ֆաբրիկներում առկա հոգեբանական բռնությունների փաստը. աշխատաժամանակի ավարտից հետո տուն գնալու արգելքը կամ հանգստյան օրերին աշխատել պարտադրելը, քանի դեռ անհրաժեշտ քանակի գործառույթը դեռ կատարված չէ:

Հարցվողները նշել են նաև թե՛ կոլեգաների, թե՛ ղեկավարների կողմից սեռական ոտնձգությունների մասին: Դրանց մասին հիմնականում չի բարձրաձայնվում, որովհետև աշխատանք գտնելու հնարավորությունները շատ սուղ են, և այլընտրանքի բացակայության պայմաններում կանայք ստիպված են լինում համակերպվել:

Հետաքրքիր է այն փաստը, որ ըստ տեղեկատուների՝ կանայք իրենց աշխատանքային իրավունքների համար տղամարդկանցից ավելի շատ են պայքարում: Վերջիններս դա դիտարկում են որպես ամոթալի արարք՝ *«Ես գործ տվող չեմ»* մոտեցմամբ: Այս հարցում ևս նախորդ զեկույցի[6] տվյալների համեմատ կան զգալի տարբերություններ, որտեղ նշվում էր, որ *«տղամարդիկ իրավական դաշտում ավելի մեծ առավելություններ ունեն»:*



Գծապատկեր 15:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ կանանց իրազեկության գնահատումն ունի հետևյալ տեսքը. հարցվողների 38%-ը գտնում է, որ կանայք բավարար տեղեկացված են, 15%-ը կարծում է, որ լավ իրազեկված են, իսկ 8%-ը՝ իրազեկված են գերազանց **(գծապատկեր 15):** Միևնույն ժամանակ, 27%-ը գտնում է, որ կանանց իրազեկության մակարդակը խիստ ցածր է: Հարցվողների 12%-ի կարծիքով՝ կանայք բոլորովին իրազեկ չեն:

[6] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

Հարկ է նշել, որ ըստ հետազոտության որակական տեղեկատվության՝ կանայք կա՛մ ոչ ոքի չեն դիմում իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության համար, կա՛մ դիմում են իրավաբանների ու լրագրողների:



Գծապատկեր 16:

Ըստ քանակական տեղեկատվության՝ կանայք իրենց աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերում աջակցություն գտնելու համար հիմնականում ոչ ոքի չեն դիմում՝ 30%, իսկ հարցման մասնակիցների 1/4-ը տեղյակ չի, թե ում կարելի է դիմել **(գծապատկեր 16):**

Հարցվողների 18%-ը կարծում է, որ նման դեպքերում կարելի է դիմել հարևաններին կամ բարեկամներին, 12%-ը՝ իրավաբաններին: Ոստիկանությանը դիմելը չնչին է մաս է կազմում՝ 3%, իսկ այլ մասնագետների աջակցությանն ապավինելը՝ ընդամենը 2%: Միաժամանակ, հարցման մասնակիցների 5% ընդգծել է, որ իրենց համայնքում նման դեպքեր չեն գրանցվում:

«Այլ» տարբերակում 4% պատասխանները ներառում են՝ վստահության բացակայություն, ֆինանսական դժվարություններ, ամաչկոտություն և հաշտվողականություն, ինչպես նաև կանանց կողմից ինքնուրույն կամ համայնքային հեղինակության միջոցով խնդիրը լուծելու միտում:

Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ կանանց համար իդեալական աշխատավայրը պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որպեսզի նրանք իրենց երեխաների համար ստիպված չլինեն անհանգստանալ: Երեխաների խնամքի անհրաժեշտությունից դրդված՝ կանայք նախընտրում են քիչ աշխատաժամերով հաստիքներ, որոնք գրեթե բացակայում են: Կանանց նախընտրություններից են նաև աշխատավայրի՝ տանը մոտ լինելը, ոչ աշխատանքային օրերին զբաղվածություն չունենալը, կանանց միջավայրում աշխատելը, գործուղումների և ճամփորդությունների բացակայությունը: Նման պայմաններում ամուսիններն ավելի քիչ հավանականությամբ կառարկեն կանանց աշխատելուն: Հարցվողներից միայն մեկն է նշել կենցաղային հոգսերի կիսումը, որը կանանց աշխատելու պարագայում ևս մեծ խնդիր է:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է նպատակային և համակարգված ծրագրային միջամտությունների իրականացում՝ ուղղված կանանց տնտեսական

ներուժի բացահայտմանը վերապատրաստման, ֆինանսական աջակցման և ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնման միջոցով:

Առողջապահություն

Լոռու մարզը համարվում է խոնավ, ինչը բնակիչների մոտ հանգեցնում է բազմաբնույթ առողջական խնդիրների՝ ոսկորների, հոդերի, անոթների և այլ հիվանդություններ: Այս տարածաշրջանում առկա Էկոլոգիական խնդիրները ևս կանանց առողջության վրա ունեն մեծ ազդեցություն:

Ուսումնասիրված համայնքներում կանայք մատնանշում են առողջապահական համակարգի մի շարք խնդիրներ, որոնք ուղղակիորեն են ազդում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջության պահպանման վրա: Առաջնահերթ խնդիրներից է որակյալ մասնագիտական խորհրդատվության և կանխարգելիչ բժշկական զննումների պակասը: Առողջական խնդիրների դեպքում շատ կանայք բժշկի դիմում են միայն այն դեպքում, երբ ախտանիշներն արդեն լուրջ բնույթ են կրում: Դա պայմանավորված է թե՛ բուժծառայությունների արժեքով, թե՛ դրանց մատչելիության խնդիրներով: Գյուղական համայնքներում առաջնային օղակի բուժհաստատություններում հաճախ զգացվում է նեղ մասնագիտացված բժիշկների պակաս, իսկ ժամանակակից սարքավորումների և լաբորատոր հետազոտությունների հնարավորությունների սահմանափակությամբ պայմանավորված՝ կանայք ստիպված են լինում մեկնել մարզկենտրոն կամ մայրաքաղաք:

Առողջապահության ծառայությունների մատչելիությունը 1-5 սանդղակով գնահատող կանանց 30,4%-ը տվել է առավելապես միջին, 21,6%-ը՝ լավ գնահատական: Գերազանց է համարել հացվողների 13,2%-ը:



Գծապատկեր 17:

21,2%-ի կարծիքով բուժծառայությունները բոլորովին ոչ մատչելի են, 13,6%-ը դրանք համարում է սակավ մատչելի **(գծապատկեր 17):**

Ըստ հետազոտության արդյունքների՝ պատշաճ բժշկական օգնություն ստանալու համար խիստ որոշիչ է ֆինանսական վիճակը. *«Ինչը վճարովի ա, թեկուզ բժշկության ոլորտում, մինչև դանակը ոսկորին չի հասնում՝ ոչ ոք բժշկի չի գնում»:*

Մարդկանց զգալի մասի տնտեսական վիճակը գրեթե չի տարբերվում նպաստառուների վիճակից, սակայն նպաստառու չլինելու պատճառով զրկված են անգամ վերջիններիս տրամադրվող բժշկական արտոնություններից: Որոշ մարդկանց տրամադրված է սոցիալական փաթեթ, բայց նրանք չեն կարողանում որևէ այլ ծառայություններից օգտվել, բացի վիրահատությունից, քանի որ հետազոտություններն իրենց հերթին ահռելի գումար են կազմում և գրեթե բոլորը վճարովի են:

Հետազոտվողների կարծիքով՝ անվճար բժշկական հաստատությունների բժիշկները բավարար հուսալի չեն մասնագիտական (կոմպետենտության) տեսանկյունից և կարող են անտեղի խնդիրների մեջ գցել: Որակային առումով նրանց աշխատանքը զիջում է խոշոր քաղաքներում տրամադրված ծառայությունների որակին, կարող են տևական սպասեցնել: Այդ պատճառով մեծ թվով կանայք նախընտրում են ծննդաբերել մարզկենտրոնում կամ մայրաքաղաքում՝ չվստահելով տեղի բուժհաստատություններին ու բժիշկներին: Այս նկատառումներից ելնելով, հղիության վերջին ամսում կանայք հաճախ կարճ ժամանակով տեղափոխվում են Վանաձորում ապրելու՝ մինչև երեխայի ծնվելը: Իսկ դա նշանակում է, որ երեխայի կամ իրենց կյանքի հանդեպ ունեցած մտավախության պատճառով առաջանում է լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն: Միևնույն ժամանակ պետությունը մեծ ռեսուրս է ծախսում, որպեսզի տարբեր համայնքներում լինեն հիվանդանոց, ծննդատուն, բժիշկներ: Ըստ հարցազրույցի մասնակիցների՝ մարզերում լավ մասնագետները քիչ են, և սխալ բուժման հետևանքով հաճախ են ականատես լինում դժբախտ դեպքերի՝ ընդհուպ մինչև կյանքի ընդհատում:

Բացի այդ՝ բժիշկներից շատերը շարունակում են առաջնորդվել խորհրդային ժամանակների ակնկալիքներով՝ որևէ «խրախույս» բերած բուժառուին առաջնահերթություն են տալիս. *«Որ չտանեմ՝ էրեսիս չեն նայի»:* Մարդիկ նախկին սովորության իներցիայով շարունակում են բժիշկներին նվերներ տալ, իսկ չունեցողները կաշկանդվում են դիմել բժշկի, քանի որ իրենք «շնորհակալություն հայտնել» չեն կարողանում:

Հետազոտվողների կարծիքով՝ ավելի շատ կա որակյալ մասնագիտական գիտելիքներով և պատշաճ վերաբերմունքով բժիշկների և այլ բուժաշխատողների, քան բժշկական ժամանակակից սարքավորումների պակաս: Որոշ դեպքերում մասնագետները կարող են լինել պրոֆեսիոնալ, բայց անբարեհամբույր մոտեցում ցուցաբերել: Հետազոտվող կանանց զգալի մասը նշել է բժիշկների կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքը, որովհետև մարզերում գերակշռում են ցածր որակավորմամբ մասնագետները, որոնք նաև ունեն որակյալ սպասարկում ապահովելու խնդիր: Բժշկական կրթություն ստացող երիտասարդները չեն վերադառնում համայնք, որը բերում է նոր, կրթված կադրերի ճգնաժամի:

Առկա է նաև իրազեկվածության խնդիր, երբ կանայք չգիտեն, թե որ դեպքում իրենք կարող են օգտվել անվճար, որ դեպքում՝ վճարովի բուժծառայություններից, ուր պետք է գնան, ինչ փուլերով անցնեն: Հատկանշական է, որ իրենց իրավունքներին իրազեկ կանայք ավելի են հակված որակյալ բժշկական օգնություն և համարժեք սպասարկում ստանալուն: Նրանք նաև ավելի քիչ են կիրառում բժիշկներին նվերներ տալու տհաճ սովորույթը, որն իր հերթին խտրականության առաջացման գերակշռող պատճառն է:



Գծապատկեր 18:

Հարցվածների կեսից ավելին ծանոթ է և կարողանում է օգտվել անվճար բժշկական ծառայություններից՝ 54%: Նախորդ զեկույցի[7] տվյալների համեմատ տարբերությունը գրեթե կրկնապատկվել է (29%-ի դիմաց): հարցվողների 30%-ը տեղյակ չէ, իսկ 15%-ը գիտի, բայց չի կարողանում օգտվել դրանից, ինչը խոսում է կանանց՝ այս ոլորտնում առկա հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածության մասին **(գծապատկեր 18):**

Մեկ այլ լուրջ խնդիր է բուժհաստատության հեռավորությունը բնակության վայրից: Եթե անգամ առողջապահական ծառայությունն անվճար է, մինևնույն է, կան կողմնակի ծախսեր՝ կեցության, սննդի, որոնք խանգարում են կնոջը՝ պարբերաբար բուժզննում անցնելու: Բացի այդ, խիստ նեղ մասնագետներն աշխատում են Երևանում կամ մարզկենտրոնում :

Առողջապահության ոլորտում թվայնացման համակարգի բացակայության հետևանքով բուժառուի լաբորատոր հետազոտությունների պատասխանները ոչ թե միանգամից ուղարկվում են համապատասխան բժշկին, այլ բուժառուն ինքն է ստիպված լինում տասնյակ կիլոմետրեր կտրելով՝ դրանք ներկայացնել անձամբ բժշկին:

Կան նաև հետևողական բժիշկներ, որոնցից բուժառուները շատ գոհ են: Բայց սա բավարար խթան չի, որպեսզի կանայք պարբերաբար և հետևողականորեն այցելեն կլինիկաներ, անցնեն պարտադիր բժշկական ստուգումներ, մասնակցեն կանխարգելիչ միջոցառումներին: Նման պրակտիկա ընդունված չէ: Կանանց մեծամասնությունն ամենամյա բուժզննում չի անցնում, այդ սովորությունը մշակված չէ:

[7] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

Շարունակելով նույն վարքային մոդելները՝ դեռահասներին նույնպես չեն տանում բժշկի ո՛չ հասունացման տարիքում, ո՛չ ընթացիկ բուժզննման:

Խնդիրներ կան սեփական առողջությունը կարևորելու, հետևողական լինելու առումով: Կանայք այնքան են հետաձգում բուժզննում անցնելը, մինչև որ խնդիրներն աճում ու բազմապատկվում են, ինչը բարդացնում է բուժառուների վիճակն ու դժվարություններ ստեղծում բժիշկների համար: Բժշկի դիմում են միայն այն ժամանակ, երբ արդեն ծայրահեղ վիճակում են, ու հիվանդությունը շատ է խորացել:



Գծապատկեր 19:

Առողջապահական ծառայություններից խուսափելու ամենատարածված պատճառներն են. վճարման հնարավորության բացակայությունը՝ 21%, մասնագետների մասնագիտական հմտությունների պակասը՝ 18%, սարքավորումների հագեցվածության պակասը՝ 17% **(գծապատկեր 19):** Հարցվածների 12%-ը չի խուսափում և պարբերաբար գնում է բժշկի: Կրկին 12% են կազմում այն հարցվողները, որոնք խուսափում են դիմել բժշկի՝ դժգոհելով բուժանձնակազմի վերաբերմունքից: 10%-ի կաշկանդվելու պատճառը բուժհաստատության հեռավորությունն է:

Հատկանշական է, որ հարցվածների 7%-ը գտնում է, որ իրենք չունեն առողջական խնդիրներ, այդ պատճառով բժշկի չեն դիմում: Նախորդ զեկույցի[8] ցուցանիշի համեմատ (24%) այս թիվը զգալիորեն պակասել է:

Ըստ որակական տեղեկատվության՝ հատուկ մտահոգություն է առաջացնում գինեկոլոգիական և վերարտադրողական առողջության ծառայությունների սահմանափակ հասանելիությունը: Թեև պետական ծրագրերն ապահովում են որոշակի

[8] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

անվճար ծառայություններ, իրականում կանանց մեծ մասը տեղեկացված չէ դրանց մասին կամ դժվարանում է օգտվել դրանցից՝ բյուրոկրատական կամ տրանսպորտային խոչընդոտների պատճառով:



Գծապատկեր 20:

Միաժամանակ, հարցվողների 90%-ը նշել է համայնքներում գինեկոլոգիական ծառայությունների առկայության մասին, և միայն 10%-ն է նշել, որ դրանք բացակայում են **(գծապատկեր 20):**

Հատկանշական է երեխայի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների մասին տեղեկատվությունը, որը մարզի տարբեր համայնքներում խիստ տարբեր է: Ըստ որոշ համայնքների ներկայացուցիչների՝ դա բավական տարածված է. *«Երկրորդ աղջկանից հետո... երրորդից հետո հաստատ կա, չորրորդն ա բերում, ուրեմն մի երկու աղջիկ հանել ա»:*

Որոշ համայնքներում էլ նշվեց, որ հղիության արհեստական ընդհատումներ չկան, ունենում են 5-6 երեխա: Այս տեսակետի հիմնավորումն այն էր, որ որոշ ընտանիքներ երեխա են ունենում պետության կողմից տվյալ երեխային տրվող նպաստի համար: *«Համայնքներում երրորդ երեխան պարտադիր ունենում են, և դա շատ լավ է»:* Կար նաև տեսակետ, որ ներկայումս կանայք դժվարությամբ են հղիանում, այդ պատճառով երեխա ունենալը խիստ արժևորվում է:

Գերակշռող էր նաև այն կարծիքը, որ հատկապես գյուղական համայքներում մարդիկ անցանկալի հղիությունից պաշտպանվելու մեթոդներից չեն օգտվում, այլ կարգավորում են հղիության արհեստական ընդհատման եղանակով: Այսինքն հղիության արհեստական ընդհատման պրակտիկայի հիմքում այս դեպքում ոչ թե սեռային նախապատվություն է, այլ սեռական դաստիարակության պակասը:

Հարցման մասնակիցների գրեթե կեսը՝ 47%, տեղյակ չի հղիության արհեստական ընդհատման տարածվածության մասին **(գծապատկեր 21):**

Հարցվածների 26%-ը համարում է, որ իրենց համայնքում դա քիչ է տարածված,



Գծապատկեր 21:

8%-ը՝ ծայրահեղ քիչ: Կանանց 15%-ը կարծում է, որ նման դեպքերը շատ են, իսկ 4%-ը նշել է «չափազանց շատ» տարբերակը:



Գծապատկեր 21:

Հարցվածների նշանակալի մեծամասնությունը՝ 75%-ը, հղիության արհեստական ընդհատումներին վերաբերվում է բացասաբար, ինչը գրեթե համընկնում է նախորդ զեկույցի[9] տվյալների հետ՝ 70,35% **(գծապատկեր 22):** Նրանց 16%-ը չի կողմնորոշվել, 6%-ը երևույթի նկատմամբ անտարբեր է, իսկ 3%-ը դրական է վերաբերվում:

Հաշմանդամություն ունեցող կանայք ունեն խնդիրներ՝ կապված բուժհաստատությունների անմատչելիության, ֆիզիկական միջավայրի անհարմարության հետ: Բոլոր տեղերում՝ ծննդատներ, գինեկոլոգիական բաժանմունքներ, դռները նեղ են և անվասայլակի համար անմատչելի: Վատ կահավորված սենյակներում անհնար է նորմալ բուժծառայություն ստանալ: Բացի այդ, այդպիսի կանայք ավելի խոցելի են՝ բժիշկների կողմից վատ վերաբերմունքի արժանանալու առումով: Որոշ բժիշկներ անգամ կարող են բացահայտ զարմանք արտահայտել, թե ինչ գործ ունի հաշմանդամություն ունեցող անձը գինեկոլոգիական բաժնում::

Հարկ է նշել սակայն, որ որոշ բուժհաստատություններ հետևում են ներառականության սկզբունքներին, ունեն հարմարեցված տարածքներ՝ տարբեր առանձնահատկություններով բուժառուների ընդունելու համար:

Ըստ որակական տվյալներ ապահովող մասնակիցների՝ արցախահայերի պարագայում բժիշկների վերաբերմունքը գնահատվել է բացահայտ դրական և աջակցող: Բժիշկները արցախահայ բուժառուների համար հիմնականում ապահովել են բարձրակարգ և որակյալ սպասարկում, առաջնահերթություն տվել, ավելի բարեհամբյուր, ավելի հետևողական են եղել նրանց հանդեպ:

Հոգեկան առողջության խնդիրները ևս առանձնահատուկ կարևորություն ունեն: Շատ կանայք նշում են, որ մասնագիտական հոգեբանական աջակցությունը կա՛մ բացակայում է, կա՛մ ֆինանսական պատճառներով հասանելի չէ: Որոշ բացառությամբ, նման ծառայությունները հասանելի են լինում խիստ կարճ ժամանակով՝ կոնկրետ ճգնաժամից տուժած անձանց համար (արցախահայեր, Դեբեդի վարարու-

[9] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

մից տուժածներ): Համայնքների մեծամասնությունում բացակայում են կանանց հոգեկան առողջության ապահովման ծառայությունները: Համայնքներում չկան կենտրոններ, որ նման ծառայություններ մատուցեն երեխաներին և/կամ մեծահասակներին, բացակայում են նաև այդ ոլորտի մասնագետները՝ հոգեբան, լոգոպեդ և այլն:

Հոգեկան առողջության խնդիր ունեցողների տնային խնամքի ապահովման մասով ևս բազում խնդիրներ կան: Պատահում է, որ մարդիկ ուղղակի հաշվառված չեն, սակայն չունեն աջակցող, որ օգնի կազմակերպել նրանց հաշվառման գործընթացը:



Գծապատկեր 23:

Իրենց համայնքներում հոգեբանական ծառայությունների կենտրոնների առկայության մասին նշել է հարցվածների 59%-ը, 41%-ը կարծում է, որ նման ծառայություններ իրենց մոտ չկան **(գծապատկեր 23):**

Այս հետազոտության մասնակից կանանց մի մասը կարծում էր, որ բժիշկները ընտանեկան բռնության դեպքերին չեն միջամտում. *«ոչինչ էլ չեն անում բժիշկները»:* Որոշները կարծում էին, որ պոլիկլինիկայի բժիշկը հաշվի է առնում բուժառուի կարծիքը, նրա կարծիքը հաշվի է առնում: Շտապ օգնության պարագայում բռնության փաստը միանգամից արձանագրվում է և փոխանցվում ոստիկանությանը:

Ընտանեկան բռնության դեպքերում բժիշկների կողմից տրվող արձագանքները հարցվող կանանց կողմից գնահատվել է հետևյալ կերպ. 65%-ը տեղյակ չի, թե ինչպես են արձագանքում: 15%-ը կարծում է, որ այն բավարար է, 12%-ը՝ վատ են արձագանքում, 7%-ը՝ լավ: Երկու ծայրահեղ կարծիքներ՝ «ծայրահեղ վատ» և «գերազանց», նշվել են 0,5% հարցվածների կողմից **(գծապատկեր 24):**



Գծապատկեր 24:

Խորին հարցազրույցի տեղեկատուների կարծիքով՝ կանայք բավարար ներկայացված են առողջապահական ոլորտի որոշումների կայացման գործընթացներում, հաշվի առնելով, որ նախարարը կին է, հիվանդանոցներում տնօրենները կանայք են, բաժնի վարիչների զգալի մասը՝ նույնպես:

Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն

Լոռու մարզում համայնքի կին ղեկավարներ առհասարակ չկան: Քաղաքային և գյուղական համայնքներում հատուկենտ հանդիպում են համայնքապետի կին տեղակալներ: Սակայն, քվոտայի հաշվին, ավագանու կազմում կանանց ներգրավվածությունը, «թեկուզև ձևական», բայց ապահովվում է:

Միևնույն ժամանակ քանիցս ընդգծվել է, որ թեև ղեկավարները տղամարդիկ են, բայց աշխատանքի մեծ մասը կանայք են կատարում: Ավագանու նիստերի ժամանակ հարց տվողները, առաջարկներ ներկայացնողները հիմնականում կանայք են:

Խորին հարցազրույցի մասնակիցների՝ ղեկավար դերերում կանանց ներկայացվածության վերաբերյալ տեսակետները բաշխվում են հետևյալ կերպ. մի կողմից նրանք դրական են համարում, որ կանայք ներկայացված են ղեկավար պաշտոններում, ստանձնել են այդ պատասխանատվությունը, հանդիսանում են դերային մոդելներ, սակայն, մյուս կողմից, կարծում են, որ կանայք պետք է համապատասխանեն այդ կարգավիճակին, կարողանան ներգրավվածություն ապահովել, համախմբել իրենց շուրջը, այլ ոչ թե ձևական ներկայություն ապահովեն քվոտայի հաշվին՝ առանց բովանդակային մասնակցության:



Գծապատկեր 25:



Գծապատկեր 26:

Հարցվողների 55%-ը կարծում է, որ իրենց համայնքում կանայք հավասարապես ներկայացված են ղեկավար դերերում, մինչդեռ 45%-ը համաձայն չէ այս պնդման հետ **(գծապատկեր 25):** Միևնույն ժամանակ նրանցից 96%-ը կցանկանար, որ իրավիճակը հավասարվեր, և միայն 4%-ն է դեմ արտահայտվել դրան **(գծապատկեր 26):**

Հարկ է նշել, որ ղեկավար դերեր ստանձնած կանայք ուրախանում են, որ իրենց շարքերը խտանում են: Որոշ առանցքային տեղեկատուների կարծիքով՝ նույնիսկ այն դեպքերում, որ տվյալ կանանց ներկայությունն ինքնակամ չի, այլ քվոտան ապա-

հովելու նպատակ է հետապնդում, հետագայում ժամանակի ընթացքում իրենք ակտիվանում են, պրոցեսի մեջ են մտնում և սկսում են աշխատել: Մյուս մասն ավելի հոռետես դիրքորոշում ունի այս հարցի վերաբերյալ՝ համոզված լինելով, որ տվյալ կանանց կյանքում ոչինչ էլ չի փոխվում, նրանք պարզապես «դրածո են, ազդեցիկ չեն, զուտ ձեռ բարձրացնող են»:



Գծապատկեր 27:

Թե որքանով են կանայք իրենց նախաձեռնությամբ դարձել ավագանու անդամ, հարցվողների պատասխանները բավականին տարբեր են. 32%-ը տվել է չեզոք պատասխան, մինչդեռ 29%-ը կարծում է, որ իգական սեռի ավագանու անդամները լիովին ինքնակամ են ընտրել այդ ուղին **(գծապատկեր 27):**

Հարցվողների 20%-ը համարում է, որ կանայք հիմնականում ինքնուրույն են որոշել ավագանու անդամ դառնալ: 8%-ը նշել է, որ իրենց ընտրությունը որոշակիորեն եղել է այլ մարդկանց ազդեցությամբ պայմանավորված, իսկ 11%-ը վստահ է, որ այդ որոշումն ամբողջությամբ եղել է բոլորովին այլ մարդկանց ազդեցությամբ:



Գծապատկեր 28:

Ըստ հարցազրույցի մասնակիցների՝ կանանց մի մասն էլ դեռ խուսափում է որոշումների կայացման պատասխանատվությունից՝ կնոջը վերապահելով մասնավոր կյանքի տիրույթը: Թեև կան կանայք, որ ցանկանում են կին ղեկավարներ ունենալ, որոնք կլինեն ավելի էմպաթիկ, իրենց իրավիճակն ու հիմնախնդիրները լավ կպատկերացնեն, կհասկանան, իրենց դրության մեջ կմտնեն, բայցևայնպես ո՛չ իրենք անձամբ են ընտրում քաղաքական ոլորտը, ո՛չ էլ իրենց մերձավոր կանանց են խորհուրդ տալիս:

Հարցվող կանանց 58%-ը երբեք չի մասնակցում համայնքի հանդիպումներին և որոշումների կայացման գործընթացներին **(գծապատկեր 28):**

«Հազվադեպ» տարբերակն ընտրել է հարցված կանանց 20%-ը, «երբեմն»-ը՝ 16%, «հաճախ»-ը՝ 6%, իսկ «միշտ» 1%-ը:



Գծապատկեր 29:

Իրենց համայնքներում այլ կանանց կողմից քաղաքական գործընթացներին մասնակցության վերաբերյալ ամենատարածված պատասխաններն են «երբեմն» 27% և «հազվադեպ» 21% **(գծապատկեր 29):**

23%-ն իրազեկված չի այլ կանանց՝ քաղաքական որոշումների կայացման գործընթացներին մասնակցության մասին: Հարցվողների 18%-ը կարծում է, որ այլ կանայք հաճախ են մասնակցում նման հանդիպումներին, իսկ 10%-ի կարծիքով երբեք չեն մասնակցում: Հարցվողների կողմից ամենաքիչը՝ 2%, նշվել է «միշտ» տարբերակը:

Առանցքային տեղեկատուներից միայն մեկը նշեց տղամարդու՝ որպես ավելի լավ ղեկավար լինելու մասին, բայց օրինակը սահմանափակվում էր կոնկրետ անձով, իսկ հիմնավորումը պայմանավորված էր ավելի շուտ անձնային որակներով, քան՝ սեռով: Այստեղ հղում էր արվում նրա նրբանկատությանը, մինչդեռ իգական սեռի մյուս ղեկավարը նրան այդ որակով զիջում էր: Հարկ է նշել, որ նրբանկատությունը հայ հասարակությունում առնական որակ չի դիտարկվում: Միևնույն ժամանակ առաջնորդության մեջ ընդգծվում էր ոչ թե բազկի, այլ փափուկ ուժի կիրառմամբ հարցերը լուծելու մոտեցման կարևորությունը:

Ըստ որակական տեղեկատվություն ապահովող մասնակիցների՝ իդեալական կին առաջնորդը պիտի լինի բանիմաց, արդարամիտ, արժեքների կրող, պրոֆեսիոնալ, իրեն ճիշտ մատուցի, ներգրավի համախոհների, լինի ներառական, հավասարության մոտեցմամբ, նրբանկատ, ճշտապահ, իր ասածն առաջ տանող, մանիպուլյացիաների չտրվող, նպատակասլաց, համառ, պայքարի մեծ ձգտումով, չհիասթափվող, ինքնավստահ, թիմում աշխատելու, լսելու և մտածելու ունակ, աջակցող, համբերող, իրեն արտոնյալ չհամարող, երբեմն թիմի շահերին իր անձնականը ստորադասող, ճկուն, նախաձեռնող, խարիզմատիկ, նաև ընտանիքն աշխատանքի հետ համատեղելու ունակ: Առաջնորդ կնոջ ուժի անհրաժեշտությունը հատկապես ընդգծում էին հանրային ատելության խոսքի դրսևորումները հաղթահարելու համար: Ըստ խորին հարցազրույցի որոշ տեղեկատուների՝ եթե կինն արդեն իր վրա է վերցրել առաջնորդի պարտականություններ՝ նա պիտի կարողանա օգտագործել բոլոր այն տեխնիկաները, ինչ որ տղամարդ առաջնորդը:

Իդեալական կին առաջնորդի կերպարը հարցվածների պատկերացմամբ պիտի ունենա մի քանի առանցքային գծեր: Ամենաշատը շեշտվել են խելամտությունը և բանիմաց լինելը՝ 17%, արդարամտությունը՝ 15% և ճկուն մտածելակերպը՝ 15% (**գծապատկեր 30):** Շատերը կարևորել են նաև ուժեղ կամքը, մանիպուլյացիաների չտրվելը, ինչպես նաև ճշտապահությունն ու հետևողականությունը՝ 14%: Մասնակիցների 1%-ն էլ չզլացավ ավելացնել նաև «Այլ»՝ յուրահատուկ հատկանիշներ, որոնք իրենց կարծիքով նույնքան կարևոր են:



Գծապատկեր 30:

Հարկ է նշել, որ իրավական առումով Հայաստանի Հանրապետությունում կանանց առաջնորդ դիրք զբաղեցնելու կամ քաղաքական մասնակցության համար որևէ խոչընդոտ չկա: Կան խնդիրներ՝ ցանկության, մոտիվացիայի, քաղաքական ինչ-որ խմբի կամ կուսակցության պատկանելիության առումով: Այնուամենայնիվ, հասարակության կողմից քաղաքական մասնակցության մեջ կինն այնքան լուսանցքավորված է ընկալվում, որ նույնիսկ օրենքներն են տարընկալումներով մեկնաբանվում: Օրենքում չկա նշված, որ պիտի լինի կին, օրենքում նշված է, որ պետք է լինի հակառակ սեռի[10]: Կանանց թիվը կարող են կազմել ընդհանուր թվի 2/3-ը, տղամարդկանցը՝ 1/3 -ը: Բայց հակառակ սեռ այս պարագայում ընկալվում է կինը:

Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ կնոջ առաջնորդական նկրտումներին կարող են խոչընդոտել ընտանիքը, հասարակությունն՝ իր կարծրատիպերով և սեփական անինքնավստահությունը: Կինը կարող է առաջնորդական հմտությունների, ինքնադրսևորվելու ցանկություն ունենալ, սակայն ընտանիքը կարող է խանգարել: Ըստ հարցվողների՝ կնոջ առաջին խոցելի տեղը ընտանիքն է: Եթե ընտանիքը պատրաստակամ է աջակցելու, ապա կնոջ մոտ կստացվի ներգրավվել որոշումների կայացման ոլորտում: Ամուսնու աջակցությունը թույլ է տալիս կնոջը հաղթահարելու

[10] Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության:

հասարակության կողմից պարտադրվող կարծրատիպերը. *«Բայց ի՞նչն ա վատ անում, հլը տեսեք՝ էսքան լիքը լավ բան ա անում, էսքան աղջիկ կրթվում ա, և այլն»:*

Հասարակության մի ստվար զանգված, իհարկե, շարունակում է դիմադրել կնոջ՝ հանրային կյանքի ակտիվությանը. *«Մեր կնիկներն էլ իրան են նայում, իրանք էլ են ուզում դուրս գան, բայց էդ լավ չի մեր համար»:* Որոշ դեպքերում առաջնորդական հմտությունների կիրարկման համար կնոջը բնավ հարկավոր չէ դրսի աջակցությունը: Կարծրատիպային այն մոտեցումը, թե կինը որպես առաջնորդ չի կարող ընդունվել կամ առաջնորդությունը պայմանավորված է սեռով, չի անդրադառնում կանանց՝ առաջնորդ լինելու որոշման վրա, եթե կինն ունի համոզմունք և ինքնավստահություն: Այստեղ նաև ընդգծվում են ինքնակառավարման, ինքնատիրապետման հմտությունները, և որոշումների կայացման հաստատակամությունը. *«Բա որ գնում ես էդ ժողովին, բա երեխեքը, բա պատուհանները, բա էս չես արել, էն չես արել և այլն»:* Ուժեղ կանայք կենցաղը մղում են երկրորդ պլան և գնում են համայնքային ժողովի:

Հարցումները փաստում են. կնոջ՝ առաջնորդ դառնալուն կարող են խոչընդոտել առավելապես ընտանիքի հոգսերը՝ 25% և ընտանեկան արգելքները՝ 22% **(գծապատկեր 31):** Որպես փաստարկ նշվել են նաև սեփական թերահավատությունն ու անինքնավստահությունը՝ 20%, կարծրատիպերը՝ *«Կինը չի կարող լինել լավ առաջնորդ»* և համայնքի կամ հասարակության քննադատությունը՝ 16%: Մասնակիցների միայն 1%-ն է նշել այլ պատճառներ:



Գծապատկեր 31:

Ադմինիստրատիվ փոփոխությունները ևս նոր խոչընդոտներ են ստեղծել կանանց՝ տեղական ինքնակառավարման համակարգում մնալու/լինելու առումով: Նախ, որոշ համայնքներում կին ղեկավարներն այլևս դադարեցին լինել ղեկավար՝ համայնքների խոշորացման պատճառով: Բացի այդ՝ լոգիստիկ դժվարությունների պատճառով չեն կարողանում լիարժեք մասնակցություն ապահովել համայնքապետարանի/ավագանու նիստերին:

Հաճախ կանանց քաղաքական մասնակցության մոտիվացիայի նվազման վրա ազդում է նաև իրենց ձայնը լսելի չլինելը: Եթե հանրային լսումներ են կամ կարծիքների ուսումնասիրություն՝ ապա դրանք խիստ ձևական բնույթ են կրում: Այսինքն՝ կա նախապես որոշված ծրագիր և, եթե անգամ ավելի լավ ծրագիր ներկայացվի, այն այնպես է «ֆալսիֆիկացվում», որ ընտրվում է նախապես որոշվածը: Շատ հաճախ կանանց կողմից առաջարկվող ոչ ստանդարտ լուծումները խոչընդոտվում են ադմինիստրատիվ դիմադրությամբ, որը նույնպես բերում է կանանց՝ քաղաքական որոշումների կայացման գործընթացին մասնակցության մոտիվացիայի անկմանը: Օրինակ՝ փողոցի վերանվանման հանրային լսմանը չմասնակցող փողոցի բնակիչներին ներգրավելու համար քննարկումները հենց փողոցում կազմակերպելու առաջարկը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հանրային լսումը պետք է լինի միայն համայնքապետարանի դահլիճում: Սա բերում է խոր հիասթափության և այն համոզմունքին, որ *«կինը քաղաքականության մեջ չի կարող անընդհատ գլխով հարվածել պատին»:*

Միևնույն ժամանակ, հարցվածների 89%-ը համամիտ է այն մտքի հետ, որ կանայք քաղաքական քննարկումներում իրենց կարծիքը բարձրաձայնելու հնարավորություն ունեն, իսկ 11%-ը հարցին տվել է բացասական պատասխան **(գծապատկեր 32):** Հաշվի առնելով կանանց մասնակցության ցուցանիշը քաղաքական քննարկումներին՝ «երբեմն»՝ 16%, «հաճախ»՝ 6%, «միշտ»՝ 1%-ը, կարելի է վստահ ասել, որ այս հարցին դրական պատասխանող կանայք բավարար տեղեկացված չեն:



Գծապատկեր 32:

Շատ հաճախ կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտում են կողմնակի ճանապարհներով, օգտագործելով տարբեր կապերը, որպեսզի տվյալ դիրքում լինի ավելի ենթարկվող, չխոսող, չխանգարող թեկնածու և կատարի իրենց որոշումները: *«Ես նախկին ավագանու կազմում էի, էս մեկում էլ էին առաջադրել, վերջին պահին հանեցին»: «Նախորդ անգամ աշխատում էին, որ ես չընտրվեմ, ու ես մեկ ձայնի տարբերությամբ եմ ընտրվել: Ու ես էդ օրը հասկացել եմ մեկ ձայնի ուժը: Էն որ ասում են՝ իմ քվեն ի՞նչ ա փոխելու, ասում եմ՝ չասեք, ես իմ օրինակով գիտեմ, որ փոխում է»:*

Քաղաքական մասնակցության պարագայում ևս մեկ խոչընդոտ կարող է լինել թիրախավորվելու վախը՝ հատկապես սոցիալական ցանցերում, որից ընտանիքում կարող են առաջանալ մեծ խնդիրներ, տան տղամարդիկ խառնվեն, և ամեն ինչ բացասական ուղղությամբ զարգանա՝ վերածվելով կռիվների, թշնամանքի: Եթե

տղամարդ քաղաքական գործիչների դեպքում իրենք իրենց կարող են թույլ տալ նույն բառամթերքով պատասխանել «հեյթըր»-ին (hater) և անցնել առաջ, ապա քաղաքականությամբ զբաղվող կանայք ավելի զգույշ են ընտրում խոսքերը, որը, սակայն, որոշ դեպքերում չի զսպում տվյալ կնոջ ընտանիքի տղամարդկանց, և ամեն ինչ կարող է ավելի բարդանալ:

Փոխհատականության տեսանկյունից՝ հաշվի առնելով կանանց առանձնահատկությունների բազմազանությունը, նրանք տարբեր մարտահրավերների են հանդիպում իրենց առաջնորդական պոտենցիալի ինքնահիրացման առումով:

Ազգային փոքրամասնության կին ներկայացուցիչներն իրենց ազգային ավանդույթների առանձնահատկությամբ պայմանավորված՝ ենթարկվում են հայրիշխանական համակարգին. տղամարդիկ կամ իրենց հոգևոր առաջնորդն ինչպես ասեն՝ նրանք այդպես էլ կվարվեն:

Հաշմանդամություն ունեցող կանայք գերազանցապես զրկված են հնարավորություններից: Եթե ցանկանան ավագանու անդամ լինել, նույնիսկ հասարակ ընտրությունների գնալը միջավայրային խոչընդոտների առաջ է կանգնեցնում նրանց: Շատերին խանգարում է նաև հասարակության կարծրատիպային մոտեցումը և դրանից ածանցվող մեծ կասկածամտությունը. *«Եթե կա առողջական խնդիր, ո՞նց կարա համայնքային աշխատանքներ իրականացնի»:*

Երիտասարդ տարիքում ղեկավար պաշտոնի նշանակվելիս ևս միանգամից բարձրանում է քննադատության ալիք՝ փորձառություն չունի, բավարար հասուն չի: «Էյջիզմ»-ի (ageism) հետևանքով շատ երիտասարդներ կորցնում են համայնքում որոշումների կայացման դիրք զբաղեցնելու մոտիվացիան:

Արցախից տեղահանվածների պարագայում բոլոր առանցքային տեղեկատուները նշել են յուրահատուկ դրական վերաբերմունք արձանագրելու մասին: Լոռու մարզում տեղահանված անձանց հանդեպ վերաբերմունքը խիստ հոգատար է և աջակցող: Գուցե մասնավոր դեպքեր կան, երբ ինչ որ խոչընդոտներ են առաջացել, սակայն հասարակությունը մեծամասամբ աջակցող է: Սակայն արցախահայերը քաղաքական ոլորտի ակտիվություն դեռևս չեն դրսևորում:

Կան նախաձեռնություններ, որոնք ուղղված են տեղական ինքնակառավարման մարմիններում կամ կազմակերպություններում կանանց առաջնորդության խթանմանը: Դրանց զգալի մասն արդյունավետ է գնահատվել խորին հարցազրույցի մասնակիցների կողմից: Միևնույն ժամանակ նշվել են որոշ ծրագրերի մասին, որոնք բավարար արդյունավետ չեն եղել: Օրինակ՝ ըստ օրենքի պետք է լինի համայնքի ղեկավարին կից՝ կանանց հարցերով հանձնաժողով, բայց դա երբևէ չի աշխատում, որովհետև համայնքային ծառայողների կողմից այն ընկալվում է որպես լրացուցիչ

հոգս: Թեև այդ ուղղությամբ որոշ կարողությունների զարգացման ծրագրեր իրականացվել են, սակայն այդ համակարգը չի գործում:

Կանանց առաջնորդության զարգացման ծրագրերի արդյունավետության մասին հնչել են նաև կարծիքներ՝ ընդգծելով, թե տղամարդկանց անտեսումը հետագայում տարասեռ աշխատանքային անձնակազմերում խնդիրներ է առաջացնում, և տղամարդիկ սկսում են զիջել իրենց կարողություններով և գիտելիքներով:

Երիտասարդ կանանց/աղջիկների առաջնորդական և այլ հմտությունների զարգացման շնորհիվ հետագայում իրենք խնդիր են ունենում նաև համայնքում շփման և անձնականը կառուցելու առումով: Նրանք կա՛մ այդ սովորածը մի կողմ են դնում՝ համայնքում ադապտացվելու համար, կա՛մ լքում են համայնքը՝ ավելի մեծ կարիերա ու նպատակահարմար անձնական կյանք կառուցելու համար. *«Բայց էս երեխեքը արդեն խնդիր ունեն, որովհետև որ վերադառնում են էս միջավայր՝ տեսնում են էս սահմանափակումները: Մենք սկսեցինք մտածել անցած տարվանից՝ լավ բան ենք անո՞ւմ, թե՞ վատ, որովհետև մենք էս երեխեքին ուժեղացնում ենք էնքան, որ իրանք արդեն խեղդվում են էդ միջավայրում, իրանք չեն կարողանում արդեն շփման եզրեր գտնել էս կարծրատիպային տղաների հետ: Իրանք իրանց հասակակիցների հետ դժվարանում են արդեն շփվել»:*

«Էս աղջիկներին, որ առաջնորդում ենք, շատ ընտրության հնարավորություն էլ չկա, գնում ընտրում են մի հատ քյարթուի: Ո՞ւր են կորչում էդքան կրթված, էդքան սեմինարների մասնակցած աղջիկները, օրինակ 22-23 տարեկանից հետո, ի՞նչ ա լինում իրանց հետ: Ընտանիքում մարում են ուղղակի: Դրա համար տղաների հետ էլ ա պետք աշխատել»:

Ինքնավստահությունը որպես որակ շատ է կարևորվել խորին հարցազրույցի մասնակիցների կողմից: Առաջնորդական դիրք զբաղեցնող կանանց կողմից ընդգծվել է կնոջ՝ որպես առաջնորդի դերի ընկալման դինամիկան: Նախկինում կանայք շատ վախենում էին, կարծես, պարտավոր էին ինչ-որ բան ապացուցել: Ու ապացուցելու և ձախողելու վախերը շատերին են ետ պահել առաջնորդ դիրք զբաղեցնելուց: Եթե ինչ որ բան էլ չստացվեր իրենց մոտ, հասարակությունը դա անմիջապես կկապեր սեռի հետ. *«կանայք չկարողացան ոչինչ անել»:* Ներկայումս այդ ընկալումը բավական փոխվել է, վախերը նվազել են: *«Կարևոր ա, որ կին առաջնորդները հասկանան, որ եթե բարձրաձայնեն՝ ուրեմն կփոխվի»:*

Կնոջ՝ որպես առաջնորդի ինքնադրսևորմանը կարող են նպաստել ինքնաբավ վիճակը, համայնքում խնդիրներ լուծելու կարողությունը, ինչ որ մարդկանց օգտակար լինելը, ինքնաբացահայտումը, համարձակությունը և ֆինանսական ինքնուրույնությունը:

Գենդերային հիմնախնդիրներ

Բռնություն: Նախ կարևոր է ընդգծել, որ «գենդեր» եզրույթը առանցքային տեղեկատուների մի մասը տարընկալումներից խուսափելու համար փորձել է պարզաբանել: Նրանց համար կարևոր էր հասկանալ՝ խոսքը կնոջ և տղամարդու տարբերությունների մասին է լինելու միայն, թե՞ ներառվելու են նաև ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների վերաբերյալ հարցեր:



Գծապատկեր 33:

Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ Լոռիում գենդերային բռնությունը բավական շատ է տարածված, օրինակներն էլ բազմազան են: Հատկապես՝ փոքր քաղաքային և գյուղական համայնքներում դրանք առանձնակիորեն ընդգծված են: Մասնագիտությունները, զբաղվածության ոլորտները, նույնիսկ՝ հանրային տարածքները գենդերային տեսանկյունից հստակ ընդգված են: Կանանց և աղջիկներին՝ որոշակի տարածքներում, որոշակի ժամից հետո տանից դուրս գտնվելն արգելվում է, և դա կարող է քննադատության առիթ հանդիսանալ:

Հարցվողների զգալի մասը՝ 43%, գտնում է, որ իրենց համայնքներում կանանց իրավունքների ոտնահարման աստիճանը միջին է՝ 43% **(գծապատկեր 33):** 26%-ը համարում է, որ կանանց իրավունքների ոտնահարում գրեթե չկա, 16%-ը՝ որ բոլորովին չկա: Միևնույն ժամանակ՝ որոշ հարցվածներ կարծում են որ կա՝ 12%, իսկ 3%-ը համոզված է, որ այն չափազանց ցայտուն արտահայտված է:



Գծապատկեր 34:

Հարցման ցուցանիշները համայնքում կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ ևս հետաքիքիր պատկեր են տալիս. 64%-ը գտնում է, որ բռնությունն առկա է, իսկ 36%-ը՝ չի համաձայնել այդ մտքի հետ **(գծապատկեր 34):**

Աղջիկ կամ կին լինելու համար համայնքում բռնության ենթարկվելու դեպքերն տեղյակ է կամ առերեսվել է հարցվածների 31%-ը, իսկ 69%-ը տեղյակ չի կամ նման փորձառության



Գծապատկեր 35:

չի հանդիպել **(գծապատկեր 35):** Հարկ է հիշեցնել, որ հաճախ բռնության երևույթները չեն նույնականացվում որպես այդպիսիք:

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել՝ կանանց նկատմամբ բռնության տեսակների նույնականացման հարցի վերաբերյալ մասնակիցների մեծ մասը նշել է ֆիզիկական ուժի կիրառման տարատեսակները: Սակայն նկատելի են նաև նոր զարգացումներ, քանի որ հոգեբանական և սեռական տեսակները ևս նույնականացվել են որպես բռնություն, օրինակ՝ վնասելու սպառնալիքը, վիրավորական կամ նվաստացնող խոսքերը, ոտնձգությունները **(գծապատկեր 36):**



Գծապատկեր 36:

Հաճախ հիշատակվել է նաև տեղաշարժի կամ արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը և ֆինանսական միջոցների վերահսկումը, ուստի տնտեսական տարբերակը ևս ընկալվում է որպես բռնություն: «Այլ» տարբերակում հարցվողների

18%-ը նշել է, որ բոլոր տեսակներն էլ վտանգավոր են, իսկ մի քանիսը նույնիսկ հատուկ ընդգծել են հոգեբանական բռնության վտանգավորությունը:

Բոլոր առանցքային տեղեկատուները փաստել են ընտանեկան բռնության տարածվածության մասին: Հատկապես գյուղական համայքներում բռնության մշակույթը համարվում է նորմալ, և ոչ ոք բռնի վարքը չի դիտարկում որպես արտասովոր երևույթ: Եթե նախկինում գործում էր *«եթե ծեծում ա՝ ուրեմն սիրում ա»* սկզբունքը, ապա հիմա այն փոխակերպվել է *«էդ ո՞վ գոնե մի անգամ չի ծեծել»* տարբերակի: Ըստ խորին հարցազրույցի տեղեկատուների՝ բռնությունից ազատվելու ամենամեծ խոչընդոտող հանգամանքն այն է, որ պետությունը չունի կնոջն աջակցելու հնարավորություն: Բռնարարից ունեցած ֆինանսական կախվածությունը գլխավոր որոշիչ գործոններից է, որ հետ է պահում կնոջը՝ բռնության շղթան կոտրելու առումով: Շատ տարածված է նաև «զոհին» մեղադրելը (victim blaming), որի պատճառով կանայք խուսափում են բարձրաձայնել իրենց փորձառության մասին և դիմել տարբեր կառույցների՝ ինքնապաշտպանության նպատակով: Նրանք հիմնականում չեն բարձրաձայնում «մատնիչ»/«գործ տվող» պիտակը չվաստակելու չքննադատվելու, և բարձրաձայնելու պատճառով ևս նոր բռնությունների չենթարկվելու համար, փոխարենը՝ բռնության դեպքերը տարիներ շարունակ մնում են քողարկված: Կան կանայք, որոնք տեղյակ են աջակցող կազմակերպությունների մասին, սակայն դրանց չեն դիմում վստահության պակասի պատճառով:

Այնուամենայնիվ ընտանեկան բռնության դեպքերն այժմ ավելի շատ են լսելի, քան նախկինում, որը բացատրվում է ոչ այնքան երևույթի բուն քանակի ավելացմամբ, որքան այն վերապրածների վստահության աճով և աջակցություն ստանալու մոտիվացիայով:



Գծապատկեր 37:

Ընտանեկան բռնության արտահայտվածության վերաբերյալ պատասխանները գրեթե նմանատիպ են. 44%-ը տվել է չեզոք պատասխան **(գծապատկեր 37):** Հարցվողների 23%-ի կարծիքով երևույթն ավելի շուտ արտահայտված չի, 18%-ի համոզմամբ՝ այն բոլորովին չկա, 13%-ը գտնում է, որ կա որոշ չափով, իսկ 2%-ի կարծիքով այն չափազանց արտահայտված է:

Հարկ է նշել, որ կանանց պարագայում համայնքի սոցիալական աշխատողներն աջակցություն ստանալու որոշումը և պատասխանատվությունը հիմնականում գցում են բռնության վերապրող կանանց վրա: Մինչդեռ երեխաների՝ բռնության ենթարկվելու պարագայում ավելի ներգրավված են և չեն հապաղում միջամտել: Սա հատկապես վերաբերելի է սեռական բնույթի բռնության տեսակներին:

Նշանակալի է այն, որ աջակցող մասնագետների մի մասը տեղյակ չի ընտանեկան բռնության առանձնահատկություններից և քննադատաբար է վերաբերվում այն կանանց, որոնք ոստիկանությունից հետ են վերցնում իրենց դիմումները և շարունակում ապրել բռնարարների հետ: Մյուս մասն էլ, թեև տեղյակ է, բայց այնուամենայնիվ ափսոսում է աջակցման համար ներդրած ջանքերը և ֆրուստրացվում է կնոջ՝ բռնարարի հետ միանալու հանգամանքից՝ հստակ տեսնելով, որ բռնության շղթան վերադարձել է զրոյական դիրքին, և ամեն ինչ կրկնվելու է: Մեկ այլ ֆրուստրացիայի առիթ է, երբ կինն ինքն է դիմադրում կողմնակի աջակցության ջանքերին՝ պնդելով, որ դա իրենց անձնական կյանքն է: Ուստի, այդ մասնագետների զգալի մասը խնդիր ունի հասկանալու այն սահմանը, թե երբ է պետք միջամտել և երբ սպասել՝ մինչ բռնության վերապրողը կհասնի այնպիսի վիճակի, որ պատրաստ կլինի ինքնուրույն դիմելու աջակցության: Այդ պատճառով աջակցող աշխատակիցների մեծ մասին հատուկ է մեղքի զգացումն ու այրման համախտանիշին հակվածությունը: Նրանք չունեն այն մասնագիտական պատրաստվածությունը և գործիքակազմը, որով կկարողանան հստակ որոշել տարբեր իրավիճակներում միջամտելու «անհրաժեշտության չափը»:

Որոշ համայնքներում կան ապահով տարածքներ, որտեղ կանայք կարող են իրենց խնդրի մասին բարձրաձայնել, հանգիստ ինքնարտահայտվել: Սակայն մարզի գերակշռող համայնքներում դրանք բացակայում են: Ուստի վստահությունը տվյալ աջակցող կառույցների նկատմամբ աճում է շատ դանդաղ: Որոշ փորձագետներ էլ կարծում են, որ մասնագիտացած կառույցները միայն թեժ գծեր ունեն՝ արձագանքման համար: Նրանք լսում են խնդիրը, սակայն հետագա աջակցության ապահովման համար բավարար ռեսուրսներ չունեն:

Եթե կինը բռնության խնդրի մասին բարձրաձայնի ու որոշի դադարեցնել, ապա ոչ մի կառույց նրա «հետո»-ն չի կարող երաշխավորել: Մարզում չկան ապաստարաններ, որոնք զգալիորեն կօգնեին բռնության ենթարկվող կանանց:

Հարցման արդյունքում պարզվել է, որ կանանց կեսից փոքր- ինչ ավելին՝ 52%-ը գտնում է հասարակական կազմակերպություններ, որոնց կարող է դիմել և հանգիստ ինքնարտահայտվել, մյուս կեսը՝ 48%, նման կառույցների գոյության մասին տեղյակ

չէ **(գծապատկեր 38):** Միևնույն ժամանակ, համայնքներում բռնության ենթարկված կանանց օգնելու համար աջակցող կենտրոնների բացակայությունը մեծ խնդիր է, քանի որ 73% հայտնել է, որ ճգնաժամային կենտրոնները կամ ապաստարանները բացակայում են: Նման ծառայությունների առկայության մասին նշել է հարցվողների ընդամենը 27%-ը **(գծապատկեր 39):**



Գծապատկեր 38:



Գծապատկեր 39:



Գծապատկեր 40:

Բռնության դեմ պայքարի՝ համայնքում առկա ռեսուրսների արդյունավետության գնահատականը միջին և ցածր է՝ համապատասխանաբար 35% և 27%, իսկ 25%-ի կարծիքով բոլորովին արդյունավետ չի: Միևնույն ժամանակ հարցվողների 11%-ը ռեսուրսները համարում է լավ արդյունավետ և 4%-ը՝ չափազանց արդյունավետ **(գծապատկեր է 40):**

Կարևոր է նաև նշել, որ բռնարարի դերում կարող են հանդես գալ ոչ միայն ամուսինը, այլև նրա բարեկամները՝ հայրը, մայրը, քույրը, եղբայրը: Բռնության գործադրման դեպքեր են նշվել նաև ծնողների կողմից: Երբեմն բռնություն գործադրողները երեխաներն են: Այս դեպքերում առանձնակի դժվարանում է կանանց՝ պաշտպանվելու որոշումը. ինչպե՞ս կարելի է դիմել ոստիկանությանը և սեփական երեխայի դեմ բողոք գրել: Ուստի նման դեպքերը հիմնականում խնամքով թաքցվում կամ նորմալացվում են՝ հաճախ որպես բռնություն անգամ չընկալելով: Խորին հարցազրույցի մասնակիցների մեծ մասի կարծիքով՝ կանանց տարբեր խմբերի առջև

ծառացած մարտահրավերները ոչ միշտ են գիտակցված, հետևաբար դրանց համար լուծումներ էլ չեն փնտրվում:

Հարկ է ընդգծել, որ կանանց ընկալումներում ընտանեկան որոշումների կայացման դինամիկան բավականին փոփոխված է:

Հարցման մասնակիցների նշանակալի մեծ մասը՝ 89%, կարծում է, որ ընտանիքում պետք է լինի հավասարություն: Սա առավել է քան 2017 թ. զեկույցում[11] արձանագրված ցուցանիշը՝ 81%: 2,5%-ը համարում է, որ որոշումներ պետք է կայացնի տղամարդը, ինչը նախորդ զեկույցի տվյալների համաձայն՝ մոտ 10%-ով իջել է: Փոխարենը 2%-ով ավելացել է այն կարծիքը, որ տղամարդը կարող է լսել կնոջը, բայց վերջնականապես վարվել ինչպես ինքն է ճիշտ համարում (7%): Սա վկայում է այն մասին, որ կանայք ավելի են սկսել գնահատել լսված լինելը: Հարցվողների միայն 1%-ն է գտնում, որ որոշումը պետք է կնոջը լինի: 0,5%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին **(գծապատկեր 41):**



Գծապատկեր 41:

Նման միտում նկատելի է նաև ընտանիքի կամ աշխատանքի առաջնահերթության հարցի առումով. զգալի մեծամասնությունը՝ 71% գտնում է, որ թե՛ ընտանիքը, թե՛ աշխատանքը հավասար կարևորություն ունեն: Այստեղ նախորդ զեկույցի[12] համեմատ տարբերությունը խիստ զգալի է, որտեղ «երկուսը միասին» կարևորել էր հարցվողների ընդամենը 45%-ը:

[11] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

[12] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:



Գծապատկեր 42:

26,5%-ն առավել կարևորել է ընտանիքը, 2%-ն՝ աշխատանքը, իսկ 0,5%-ը չգիտեն կամ չեն պատասխանել **(գծապատկեր 42):**

Խտրականություն: Ինչպես այլ երևույթների դեպքում՝ խտրական վերաբերմունքի դրսևորումը ևս համայնքից համայնք տարբերվում է՝ կախված անձի որոշակի առանձնահատկություններից և որոշակի խմբին պատկանելությունից:

Մասնակիցների մեծամասնությունը՝ 62,1%, իրենց համայնքներում նկատել է խտրական վերաբերմունքի դրսևորումներ, մինչդեռ 37,9%-ը չի նկատել **(գծապատկեր 43):**



Գծապատկեր 43:

Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ ամենից խտրական վերաբերմունք արտահայտվում է ամուսնալուծված կանանց հանդեպ, ինչը հատկապես ընդգծվում է փոքր և գյուղական համայնքներում: Նույնը կարող է տարածվել նաև արտագնա աշխատանքի մեկնած ամուսին ունեցող կանանց հանդեպ: Հանրային ընկալումն այնպիսին է, որ այդպիսի կանայք իրավունք չունեն աշխատանքային կոլեկտիվի հետ մասնակցել ժամանցների, քանի որ իրենք մենակ են: Այրի կանանց հանդեպ մեծ հարգանք կա, քանի դեռ նրանք չեն որոշել անձնական կյանքը կրկին դասավորել:

Ինչպես և նախորդ՝ 2017թ. զեկույցում[13] էր նշվել, հիմա ևս թե՛ այրի, թե՛ ամուսնալուծված կանանց՝ երկրորդ ամուսնության ցանկությունը պարսավելի է: Կարելի է եզրակացնել, որ ութ տարվա ընթացքում այս առումով վերաբերմունքը չի փոխվել: Այդ կանայք պետք է ենթարկվեն համայնքի կողմից ընդունված «կարելի» և «չի կարելի» կարծրատիպերին, որպեսզի շարունակեն ընդունված լինել տվյալ համայնքում. կամ ընտրում ես հասարակական հարգանքը, կամ՝ ընտանեկան անձնական երջանկությունը: Շատ հաճախ ամուսնալուծվելուց հետո կանայք տեղափոխվում են այլ համայնք՝ քննադատություններից խուսափելու նպատակով:

Ամուսնալուծված կնոջ հանդեպ համայնքում առկա վերաբերմունքը հիմնականում՝ 48%, չեզոք է, սակայն կան նաև բացասական կարծիքներ. 18%-ը

[13] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն, 2017:

Գծապատկեր 44:

գնահատել է վատ, 4%-ը՝ ծայրահեղ վատ: Միևնույն ժամանակ վերաբերմունքը գնահատել է լավ հարցվածների 19%, գերազանց՝ 10%-ը **(գծապատկեր 44):**

Երեխա չունեցող կանանց նկատմամբ համայնքի վերաբերմունքն արդեն այլ է. հարցվողների 31%-ը չեզոք է, համապատասխանաբար 30% և 28%-ի կարծիքով վերաբերմունքը լավ կամ գերազանց է: Միևնույն ժամանակ 9%-ը վատ է վերաբերվում, իսկ 1%-ը՝ ծայրահեղ վատ, ինչը վկայում է, որ այս հարցում ևս կան որոշակի կարծրատիպեր **(գծապատկեր 45):**



Գծապատկեր 44:



Գծապատկեր 45:

Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ սեռական փոքրամասնությունների հանդեպ խտրականություն չի նկատվում, քանի որ նրանք էլ իրենց հերթին փորձում են աննկատ մնալ համայնքներում: Կան համայնքներ, որտեղ ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների հանդեպ խտրականությունը բացահայտ չի. կարող են շփվել, բայց նրանց թիկունքում շարունակեն քննադատել ու մեղադրել:



Գծապատկեր 46:

Այլ է պատկերը հարցման մասնակիցների մոտ. այստեղ սեռական փոքրամասնության ներկայացուցիչների հանդեպ վերաբերմունքը խիստ բացասական է: Ըստ հարցվող կանանց 57%-ի՝ համայնքում ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչներին վերաբերվում են ծայրահեղ վատ, 18%-ի կարծիքով՝ վատ, 13%-ը գտնում է, որ վերաբերմունքը չեզոք է **(գծապատկեր 46):** Միայն 5%-ն ու 6%-ն են լավ կամ գերազանց վերաբերվում նրանց:

Հարկ է նշել, որ նախորդ զեկույցի[14] տվյալների համեմատ բացասական վերաբերմունքը նվազել է 99%-ից 75%-ի (75%-ը «ծայրահեղ վատ» և «վատ» ցուցանիշների հանրագումարն է):

Հաջորդ քննարկվող խումբը ներառում է Արցախից տեղահանվածներին. նրանց հանդեպ գերազանցապես դրական են նշել վերաբերմունքը՝ մի քանի բացառիկ համայնքները չհաշված: Սրանք հիմնականում այն համայնքներն են, որ կողքի համայնքի հետ էլ են մշտական մրցակցության մեջ:



Գծապատկեր 47:



Գծապատկեր 48:

Ըստ հարցման ևս Արցախից տեղահանվածների հանդեպ համայնքում վերաբերմունքը զգալիորեն դրական է. 37%-ը կարծում է, որ նրանց գերազանց են վերաբերվում, 36%-ը՝ լավ, 22%-ը չեզոք են: Միայն 4%-ն է կարծում, որ վատ են վերաբերվում, ծայրահեղ վատ վերաբերմունքը գրեթե բացակայում է՝ 1% **(գծապատկեր 47):**

Ըստ որակական տեղեկատվության՝ ամենադրական վերաբերմունքը նշվել է ազգային փոքրամասնությունների հանդեպ: Հատկապես մոլոկանների հանդեպ բոլոր փորձագետներն ընդգծված դրական վերաբերմունքի մասին են հայտնել, թեև նրանց համայնքը հայերի համար համարվում է փակ համայնք:

Սակայն հարցման արդյունքներով էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների հանդեպ գերազանց վերաբերմունքը՝ 36% մի փոքր զիջել է Արցախից տեղահանվածների հանդեպ դրսևորվողին՝ 37% **(գծապատկեր 48):** Վերաբերմունքը լավ է գնահատել հարցվողների 29%-ը, 26%-ը այն համարում է չեզոք, 5%-ը՝ վատ, 3%-ը՝ ծայրահեղ վատ:

Հետազոտության որակական տեղեկատվության համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ վերաբերմունքը լայն դիապազոնով է նշվել, որն

[14] Լոռու մարզի կանանց հիմնախնդիրներների բացահայտման հետազոտական զեկույց, «Սպիտակի Հելսինկյան խումբ» հասարակական կազմակերպություն 2017:

առանձնացել է զգայուն և աջակցողից մինչև կարեկցող և ոչ զգայունի տիրույթում, երբ անձանց անվանում են «հիվանդ» : Այստեղ հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ վերաբերմունքի առումով գենդերային տարբերակում չի առանձնացել :



Գծապատկեր 49:

Հարցման պարագայում հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ համայնքի վերաբերմունքը հիմնականում գնահատվել է լավ՝ 37,5% **(գծապատկեր 49):** 36%-ի կարծիքով՝ գերազանց: 23%-ը նրանց հանդեպ համայնքի վերաբերմունքի մասին ունի չեզոք կարծիք, 2%-ը՝ վատ, 0,5%-ը՝ ծայրահեղ վատ:

Հասարակության ընկալման առումով՝ եթե հաշմանդամություն ունեցող կինը խելացի է, վերլուծող, ապա նրա տան անդամներն ու շրջապատը լսում են իրեն: Բայց կան նաև ընտանիքներ, որտեղ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կնոջ մտավոր ունակությունները հաշվի չեն առնում և, անգամ, տեղաշարժման դժվարությունները նույնացնում են «մտավոր անկարողության» հետ: Նման դեպքերում կանանց կարողություններն այդպես էլ մնում են չբացահայտված: Կինն ինքն էլ է համոզված, որ ոչինչ չի կարող անել: Հաշմանդամություն ունեցող կանանց համար շատ հնարավորություններ, ծրագրեր գրեթե չկան: Առկա ծրագրերին էլ մասնակցում են հիմնականում նույն ակտիվ կանայք ու աղջիկները:

Այսպիսով, տարիքը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, հաշմանդամությունը և այլ գործոններ համայնքներում տարբերվում են ըստ իրենց ազդեցության չափի, սակայն դրանց զգալի մասը որոշիչ են հանդիսանում տվյալ համայնքում կանանց իրավունքների իրացման և ռեսուրսների հասանելիության առումով:

Ճգնաժամային իրավիճակների արձագանքում

Պատերազմների ազդեցությունը: Լոռու մարզի ոչ մի համայնք անմիջական պատերազմական գոտի չի եղել, սակայն արցախյան պատերազմների հետևանքները բասացական ազդեցություն են թողել Լոռու տարբեր համայնքների կանանց կյանքի որակի վրա: Զավակ կամ ամուսին կորցրած կանայք դեռ շարունակում են վշտի տարբեր փուլերում լինել: Վիրավոր ընտանիքի անդամ ունեցող կանայք ունեն հատուկ մասնագիտական աջակցության կարիք՝ հասկանալու համար, թե ինչպես ճիշտ հարաբերվեն ընտանիքի վիրավոր անդամի հետ: Կան կանայք, որոնք հոգեկան առողջության խնդիրներ են ձեռք բերել: Շատերի մոտ գերշխում է ապաթիան, նրանք դարձել են անտարբեր, նույնիսկ դժվարությամբ են կարողանում լիարժեք ուրախանալ: Տղա զավակ ունեցող մայրերի մոտ ապագայի նկատմամբ առաջացել է վախ և անվստահություն: Շատերը ձգտում են տղաներին տանել այլ երկրներ՝ բանակում ծառայությունից խուսափելու համար: Համարյա բոլորն ընգծել են, որ կյանքի որակը փոփոխվել է դեպի բացասականը:

Քովիդ-19 համավարակի ազդեցությունը: Քովիդ-19 համավարակի ազդեցության քննարկման պարագայում կարծիքները տարամիտվել են: Կարելի է առանձնացնել կարծիքների երեք հիմնական ուղղություն: Մի մասը համոզված է, որ համավարակը բացասաբար է ազդել իրենց համայնքի կանանց կյանքի որակի, սոցիալ-տնտեսական վիճակի վրա, քանի որ շատ մանր և միջին բիզնեսներ փակվել են, մեծացել է կանանց խոցելիությունը, անապահովությունը, զայրույթն ու չհասկացված լինելու զգացումը, աճել են ամուսնալուծությունները: Բացի այդ՝ իջել է նաև կրթության որակը, քանի որ դպրոցները պատրաստ չէին ապահովելու հեռավար կրթություն: Երկրորդ մասը գտնում է, որ համավարակը նշանակալի ազդեցություն չի թողել : Մի մասն էլ կարծում է, որ այն ավելի շատ հնարավորություններ առաջ բերեց. ոմանք ինչ-որ նոր բաներ սովորեցին, նոր ռեսուրսներ հայտնաբերեցին: Հատկապես 40-50 տարեկան կանայք կարողացան արագ կողմնորոշվել, հարմարվել, սովորել, օգտվել նոր տեխնոլոգիաներից: Համավարակով ներմուծվեց հեռավար սովորելու և աշխատելու մշակույթը, ինչը շատ հարմար է հատկապես փոքր երեխաներ ունեցող կանանց համար:

Դեբեդի վարարման ազդեցությունը: Դեբեդ գետի վարարումը մեծ աղետ էր, որը նույնպես բացասաբար է ազդել տուժած համայնքների կանանց կյանքի վրա: Վնասվել կամ ավերվել են գյուղատնտեսական ցանքսերը, զբոսաշրջության տարածքները, որն էականորեն ազդել է համայնքերիի տնտեսական զարգացման հնարավորությունների վրա: Թեև պետությունը փոխհատուցել է վնասներ կրած ընտանիքներին, բայց մարդիկ ավելի շատ բան են կորցրել, նաև այնպիսի, որոնց հետ

ունեին տարբեր հուզական կապվածություններ, հիշողություններ: Մի կին կորցրել է իր ողջ գրադարանը, ինչը նա համարում էի իր ինքնության անբաժանելի մասը:

Կլիմայական փոփոխությունների ազդեցությունը: Ըստ խորին հարցազրույցի մասնակիցների՝ կլիմայական փոփոխությունները ևս բացասաբար են անդրադառնում Լոռու մարզի կանանց կյանքի որակի վրա՝ առաջացնելով տարաբնույթ խնդիրներ՝ առողջականից մինչև տնտեսական: Մասնավորապես ընդգծվել են կանանց մոտ ավելի հաճախակի հանդիպող սրտանոթային և նյարդային հիվանդությունները, գլխացավերը: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված բավականին քչացել է գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը: Մարդիկ մտավախություն ունեն, որ իրենց աշխատանքը արդյունք չի ունենա, քանի որ որոշ համայնքներում ամռան տևողությունը կրճատվել է մեկ ու կես ամսով, իսկ որոշ համայքներում էլ սկսել են գերիշխել ավելի շոգ եղանակային պայմանները: Մարդիկ դեռևս չեն կարողանում ադապտացվել այդ փոփոխություններին:

Որոշ համայնքներում փշատերև ծառերի փոշոտման շրջանում զբոսաշրջիկների մեծ հոսք է լինում, որին սպասում են տվյալ համայնքի բնակիչները: Սակայն գլոբալ տաքացմամբ պայմանավորված՝ հաճախակի անձրևների պատճառով փոշոտման տևողությունը 2-3 շաբաթի փոխարեն տևում է ընդամենը 4-5 օր, որը բացասաբար է անդրադառնում համայնքի կանանց տնտեսական վիճակի վրա:

Արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմներ: Արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմներին կանանց մեծ մասը չի տիրապետում: Համայնքների մեծամասնությունում հետազոտվողները դրանց արձագանքման, կամ դիմակայման մեխանիզմներ չեն նշել: Պատահել է, որ համայնքների ապաստարան հանդիսացող նկուղները քարտեզագրելու փորձերն անգամ բնակիչների կողմից ընդունվել են բացասաբար. սկսել են վախենալ, լացել: Մարդիկ քիչ են տեղեկացված, թե տագնապի ազդանշանի դեպքում որտեղ պիտի պատսպարվեն, ինչ վարք դրսևորեն:

Իբրև վերապատրաստումներ՝ տարածված են առաջին բուժօգնության մեթոդներ և նման հարակից թեմաները, որոնց հիմնականում մասնակցում են դպրոցականներն ու երիտասարդները: Արտակարգ իրավիճակների համապատասխան ստորաբաժանումները անցկացնում են համապատասխան դասընթացներ, ուսումնական հաստատություններում պարբերաբար կազմակերպում են տարհանման ծրագրեր: Կարմիր խաչը ևս տեղեկատվական դասընթացներ է կազմակերպել: Սակայն պետք է փաստել, որ ճգնաժամային կառավարման և այլ վերապատրաստումներ մեծահասակների՝ հատկապես կանանց համար չկան:

Ամենամեծ բացթողումներից մեկն այն է, որ որ կանխարգելման միջամտական փորձեր նախկինում չեն եղել և ներկայումս նույնպես բացակայում են:

Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակների ազդեցությանը, ապա ըստ հարցվողների՝ ամենամեծ բացասական ազդեցությունը թողել է պատերազմը՝ 34%, որին հաջորդում են համավարակը՝ 27% և բնական աղետները՝ 23%, մինչդեռ կլիմայական փոփոխությունների ազդեցությունը փոքր է՝ 9%: 4%-ի համար նշված-ներից ոչ մեկ որևէ բացասական ազդեցություն չի ունեցել, 2%-ը չգիտի դրանց ազդեցության մասին **(գծապատկեր 50):**



Գծաաատներ 50:

Արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ գործողությունների մասին համայնքի մեջ առավել տեղեկացված են համավարակի և բնական աղետների պարագայում անհրաժեշտ արձագանքման գործողություններից (29%), մինչդեռ պատերազմին (21%) և կլիմայական փոփոխություններին (10%) վերաբերող գիտելիքները համեմատաբար ցածր են: 6%-ը նշել է, որ չգիտի, թե ինչ պետք է անել, իսկ 2%-ը կարծում է, որ որևէ գործողություն անհրաժեշտ չէ **(գծապատկեր 51):**



Գծապատկեր 51:



Գծապատկեր 52:

Այն հարցին, թե որքանով են համայնքում կանանց համար հասանելի արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները, հարցվողների մեծ մասը՝ 29%, պատասխանել է, որ չգիտի: Մի զգալի մաս նշել է համավարակը՝ 20%, որին հաջորդում են բնական աղետների ցուցանիշը՝ 17%, պատերազմական իրավիճակներինը՝ 14% և գլոբալ տաքացմամբ պայմանավորված կլիմայական փոփոխությունները՝ 7%: Մինչդեռ դրանց բացակայության մասին նշել է հարցվողների 11%-ը, ինչը փաստում է այդ ոլորտում առկա համապատասխան միջոցառումների կարիքն ու անհրաժեշտությունը **(գծապատկեր 52)**:

Եզրակացություն

Կրթություն

- Առկա է պատկերացում, որ բարձրագույն կրթությունը բավարար հիմք չէ տնտեսական ինքնուրույնություն ապահովելու համար:
- Կանայք ուսումը կիսատ են թողնում ամուսնության կամ ֆինանասական խնդիրների պատճառով: Ուսումը կիսատ թողած կանայք կորցնում են մոտիվացիան և գրեթե երբեք չեն շարունակում կրթությունը:
- Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման համար առավել որոշիչ գործոններ են մասնագիտությունների գենդերային բաշխումը, ֆինանսական հնարավորությունները, ուսումնական հաստատությունների տրամադրած մասնագիտությունների ընտրանին, ենթակառուցվածքների՝ տրանսպորտի առկայություն/բացակայությունը: Մասնագիտությունների նորաձև լինելը ևս ազդում է ընտրության մոտիվացիայի վրա՝ ծանրաբեռնելով մի ոլորտը և սղություն առաջացնելով այլ մասնագիտական ոլորտնելում:
- Հաշմանդամություն ունեցող կանայք գրեթե զուրկ են կրթություն ստանալու հնարավորությունից առկա կարծրատիպային մտածելակերպի և հարմարեցվածության բացակայության պատճառով: Թեև համալսարանում պատրաստ են ընդառաջել և դասերը կազմակերպել տվյալ դիմորդների կարիքներին համապատասխան, բայց և այնպես հաշմանդամություն ունեցող դիմորդներ գրեթե չկան:
- Գյուղական համայնքներում կարծրատիպային մոտեցումներն ավելի սուր են արտահայտված. հաճախ ընտանիքի սոցիալական «վարկանիշն» է որոշիչ, թե որքան ազատ կլինի աղջկա մասնագիտական ընտրությունը: Ոչ ավանդական մասնագիտություններ ընտրելու դեպքում բարձր սոցիալական հեղինակություն ունեցող ընտանիքների աղջիկներին հասարակությունն ավելի հանդուրժողաբար է վերաբերվում:
- Կրթություն չստանալու և հետագայում ընտանեկան բռնության ենթարկվելու միջև առկա է դրական կորրելացիա:
- Կանայք մասնակցում են դասընթացների, բայց շարունակություն չի լինում՝ կիրառման հարթակների բացակայության պատճառով:
- Համալսարանները հիմնականում կենտրոնացված են Հայաստանի մեծ քաղաքներում, փոքր համայնքներում տրամադրվող կրթության որակը չի բավարարում տվյալ համայնքի գործատուներին:

- Հզորացման դասընթացները, որոնք կազմակերպվում են միայն կանանց համար, առնվազն հանրային կառավարման ոլորտում նկատելի անջրպետ են ստեղծել կանանց և տղամարդկանց գիտելիքների միջև:
- Ազգային փոքրամասնությունների մեծամասնության մոտ բացակայում է կրթություն ստանալու մոտիվացիան, հատկապես՝ բարձրագույն կրթության: Բացի այդ, նրանց հայերենի իմացությունը չի բավականացնում որևէ բարձրագույն կրթական կառույցում սովորելու, համայնքի մասնագետներն էլ չեն կարողանում նրանց մայրենի լեզվով անհրաժեշտ կրթությունն ապահովել: Ազգային փոքրամասնությունների մոտ կանանց կրթության իրավունքի իրացումը մեծամասամբ խախտվում է աղջիկների վաղ ամուսնության պրակտիկայի մշակույթով:

Աշխատանք/զբաղվածություն

- Կանանց՝ աշխատաշուկայում պասիվ լինելու հիմնական պատճառներն են՝ աշխատատեղերի սակավությունը/բացակայությունը, երեխաների խնամքն ապահովող կառույցների սակավությունը/բացակայությունը, ցածր աշխատավարձը (նպաստի չափը գրեթե հասնում է նվազագույն աշխատավարձին), գործատուների խիստ պահանջներն և երկար՝ երեխաների խնամքի կազմակերպման հետ անհամատեղելի աշխատաժամերը, կանանց ու աղջիկների կողմից կարծրատիպային սահմանափակումները, գործատուների կողմից պահանջվող անհրաժեշտ հմտությունների և գիտելիքների պակասը/բացակայությունը, ընտանեկան սահմանափակումները, կոլեգաների և ղեկավարների կողմից սեռական ոտնձգությունները, որոնց մասին հիմնականում չի բարձրաձայնվում, քանի որ համայնքում կանանց կմեղադրեն, իսկ նրանք նաև կկորցնեն ֆինանսական եկամուտի աղբյուրը:
- Շատ կանայք չեն պատկերացնում, որ իրենց ստացած կրթությունը/մասնագիտությունը չի համապատասխանում առկա աշխատաշուկայի պահանջներին:
- Կանայք հիմնականում կարողանում են տեղ գտնել կարի ֆաբրիկաներում կամ հացի արտադրամասերում, որտեղ առկա է բռնություն և շահագործում:
- Կանայք մոտիվացիա չունեն ինքնուրույն ինչ որ բան փոխելու իրենց կյանքում, չեն ցանկանում «հարմարավետ գոտուց» դուրս գալ և նոր դեր վերցնել իրենց վրա, որպես արդարացում հաճախ օգտագործելով ամուսնու «արգելքը»:
- Գործատուները չեն ցանկանում կանանց ընդունել աշխատանքի կես դրույքով (կրճատված աշխատաժամանակով): Գործատուի ընկալմամվ աշխատանքի այդ ձևաչափը լրացուցիչ հոգսերի բեռ է:
- Գործատուների մեծ մասը խիստ պահանջկոտ է, ոչ երեխայակենտրոն: Հաճախ փոքր երեխա ունեցող կամ նոր ամուսնացած կանանց աշխատանքի չեն

ընդունում՝ կասկածի տակ դնելով նրանց աշխատունակությունն ու ժամանակի կառավարումը:

- Հատկապես երիտասարդ մայրերը, որ արդեն ցանկանում են մտնել աշխատաշուկա, բախվում են դժվարությունների՝ առաջին աշխատանքը գտնելու հարցում: Խնդիրները կապված են ինչպես համապատասխան աշխատատեղերի բացակայության, այնպես էլ փորձի պահանջի հետ: Նրանցից շատերը չունեն պրակտիկ փորձ կամ չեն կարողացել մասնակցել վերապատրաստման ծրագրերի:
- Կանանց զգալի մասը չի գիտակցում, որ իրենց աշխատանքային իրավունքները ոտնահարվում են, իսկ նրանք, որոնք գիտակցում են, մեծամասամբ հանդուրժում են անելանելիությունից դրդված:
- Ամուսնացած կանանց մեծ մասը սպասարկման ոլորտի աշխատանքը շատ հաճախ ընկալում է որպես նվաստացուցիչ և չի համաձայնում աշխատել:
- Համայնքում որոշ մաս մեղադրում/թիրախավորում է այն կանանց, որոնց աշխատանքի են գնում ծառայողական ավտոմեքենայով:
- Այն տղամարդկիկ, որոնց կանայք իրենցից ավելի են վաստակում, դառնում են անինքնավստահ ու դա կոմպենսացնում են ոչ թե ավելի լավ վարքով, այլ բռնության տարբեր դրսևորումներով:
- Հաշմանդամություն ունեցող կանայք գործնականում աշխատաշուկայից դուրս են մնում: Նրանք բախվում են միաժամանակ մի քանի խոչընդոտների՝ ֆիզիկական միջավայրի անմատչելիություն, հարմարեցված աշխատատեղերի բացակայություն, գործատուների նախապաշարմունքներ:

Առողջապահություն

- Լոռու մարզի կանանց առողջապահական կարիքների վերլուծությունը ցույց է տալիս, առկա առողջապահական համակարգը տարածքում բավարար չի գործում, այն չի բավարարում կանանց բազմաշերտ կարիքներին՝ հատկապես գյուղական համայնքներում:
- Մարզի կլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ կանայք ունեն առողջական խնդիրներ, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով չեն կարողանում դիմել բժիշկի և բուժաջակցություն ստանալ:
- Հետազոտության արդյունքների տվյալներով՝ բժշկական ծառայություններն ընդհանրապես հասանելի չեն: Դրանց զգալի մասը վճարովի է: Դժվար է հատկապես սոցիալապես վատ պայմաններում գտնվող մարդկանց համար, որոնք նպաստառու չեն, արտոնություններ չունեն, ֆինանսապես խոցելի վիճակում են և ուղղակի ի վիճակի չեն հասնելու Երևան կամ մարզկենտրոն՝ որակյալ բժշկական սպասարկում ստանալու նպատակով:

- Համայնքների առողջապահական ծառայությունները լայն ընտրանք չեն առաջարկում ու դա ևս մղում է կանանց համապատասխան օգնություն ստանալ համայնքից դուրս՝ այլ վայրերում, որն էլ իր հերթին բերում է տնտեսական անհարմարությունների:
- Պետական պատվերի տեղերը շատ քիչ են, վճարովի բուժծառայությունները՝ շատ թանկ: Կանանց բուժսպասարկումը՝ նրանց իրազեկության և ֆինանսական հնարավորությունների սահմանափակումների պատճառով կարող է լինել ոչ պատշաճ և ոչ մշտական:
- Այն կանայք, որոնք իրազեկ են իրավունքներից, բուժսպասարկումից ավելի գոհ են: Նրանք նաև ավելի քիչ են հակված բժիշկներին խրախույսներ/երախտագիտություն հայտնելու մոդելի կիրառմանը:

Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն

- Լոռու մարզում համայնքային ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածությունը բացակայում է, իսկ ավագանու կազմում քվոտաներով ապահովված մասնակցությունը հաճախ կրում է ձևական բնույթ: Սակավ դեպքերում են կանայք ներգրավված որոշումների ընդունման/կայացման գործընթացներում և բավարար ազդեցություն ունենում համայնքապետերին իրենց խոսքը ներկայացնելու առումով: Նման դեպքերում կանայք միջնորդավորված են ներգրավված որոշումների կայացման գործընթացներում:
- Կանանց քաղաքական ներգրավվածությանը խոչընդոտում են հասարակական կարծրատիպերը, ընտանեկան անհամաձայնությունները և սեփական անինքնավստահությունը:
- Կանայք ակտիվ են նիստերում որպես առաջարկներ ներկայացնողներ, սակայն հաճախ մնում են երկրորդական դերերում:
- Առաջնորդ կին լինելու հաջողության համար անհրաժեշտ են փափուկ հմտություններ, համախմբող կարողություններ և մեծ ինքնավստահություն:
- Ընտանիքի աջակցությունը կնոջ քաղաքական ներգրավվածության հիմնական գործոններից է:
- Կանանց քաղաքական մասնակցության իրավական խոչընդոտներ չկան, սակայն շատ հաճախ այդ խոչընդոտներն արհեստականորեն առաջանում են հասարակական ընկալումների և օրենքների սխալ մեկնաբանությունների պատճառով:
- Ադմինիստրատիվ փոփոխությունները և լոգիստիկ դժվարությունները կրճատել են կանանց՝ տեղական ինքնակառավարման գործընթացներին մասնակցության հնարավորությունները:

- Կանանց՝ քաղաքական մասնակցության մոտիվացիայի պակասը կապված է ձայնի, ոչ ստանդարտ առաջարկների խոչընդոտման և վախի՝ հատկապես սոցիալական ցանցերում թիրախավորվելու վտանգի հետ:
- Պետք է զարգացնել ոչ միայն կանանց, այլ նաև տղամարդկանց տեխնիկական/մասնագիտական հմտությունները՝ համագործակցային, աջակցող և ներառական միջավայր ունենալու համար:
- Երիտասարդ կանայք հաճախ բախվում են "էյջիզմի" և համայնքում ներգրավվելու դժվարությունների հետ, ինչը նվազեցնում է նրանց մոտիվացիան:
- Առաջնորդական դիրքը, քաղաքական մասնակցությունը և ինքնավստահությունը կանանց առաջնորդական պրակտիկայում ապրում են դրական դինամիկա, վախերն ու կասկածները նվազում են, ինչը նպաստում է այդ ոլորտում կանանց ներգրավվածության աճին:

Գենդերային հիմնախնդիրներ

- «Գենդեր» եզրույթը դեռ ասոցացվում է նույնասեռականության հետ:
- Կանանց նկատմամբ վերահսկող կամ բռնի վարքը դիտվում է որպես «նորմալ» ընտանեկան հարաբերություն:
- Տարբեր համայնքներում մոտեցումները տարբեր են, սակայն քաղաքային համայնքներում գենդերային հիմքով խտրականությունն ու բռնությունն արդեն այդքան չեն նորմալիզացվում, որքան գյուղականներում:
- Գենդերային հիմքով բռնության կամ խտրականության ենթարկվածները հաճախ չեն կարողանում բռնության շղթան ճեղքել բռնարարից ունեցած կախվածության պատճառով:
- Հեռավոր համայնքներում դեռևս կա խտրական մոտեցում. օրինակ՝ եթե սխալ անում է տղան, նա արդարացվում է հասարակության կողմից, որովհետև տղա է: Անչափահաս աղջիկները հաճախ են թիրախավորվում իրենց վարքի համար:
- Հաճախ ընտանեկան բռնության ենթարկում է ոչ միայն ամուսինը, այլ նաև ընտանիքի այլ անդամները: Կյանքի ընթացում համայնքի բոլոր կանայք առնվազն մեկ անգամ առնվազն մեկ տեսակի բռնության ենթարկվում են: Որոշ տեղերում մեկ անգամը «ներելի է», ինչը հուշում է ընտանեկան բռնությունների առանձնահատկություններից անտեղյակության մասին:
- Բռնության ենթարկվողները բռնությունը չեն նույնականացնում որպես իրավունքների ոտնահարում, նույնականացնելիս էլ բռնության շղթան կոտրելու ելք չեն գտնում:
- Ընտանեկան բռնության ենթարկվող կանայք շատ հազվադեպ են դիմում մասնագիտական միջամտության, առավել ևս ոստիկանությանը, քանի որ չեն ցան-

կանում «գործ տվողի» պիտակը կրել: Բացի այդ՝ հաճախ հետ են վերցնում ոստիկանությանը ներկայացված դիմումը, ինչի պատճառով ոստիկանները հաջորդ անգամներին չեն ցանկանում անհրաժեշտ միջամտությունն ապահովել:

- Սոցիալական աշխատողներին դիմելիս խնդրում են՝ ապահովել գաղտնիությունը, որպեսզի բռնության փորձառության մասին բարձրաձայնելը նոր բռնության առիթ չդառնա:
- Մասնագետները դժվարանում են կողմնորոշվել՝ մինչև որտեղ/որքան/երբ կարող են միջամտել բռնության ականատես/ունկնդիր լինելիս և շատ ծանր ապրումներ են ունենում նմանատիպ դեպքերի պատճառով. մի կողմից չգիտեն՝ օգնե՞ն, թե՝ ոչ, մյուս կողմից երբեմն օգնելիս ֆրուստրացվում են, քանի որ բռնության ենթարկվողն սկսում է հրաժարվել աջակցությունից՝ պնդելով, որ դա իրենց ներընտանեկան հարցն է:
- Հարցվածները նշում են, որ կանանց իրավունքների ոտնահարման բազմաթիվ դեպքեր չեն բարձրաձայնվում՝ վախի, ամոթի և բարձրաձայնելու դեպքում հետևանքների անորոշության պատճառով: Թեպետ որոշ կանայք դիմում են ոստիկանությանը, սոցիալական աշխատողներին կամ համայնքային ղեկավարությանը, այնուամենայնիվ կարճ ժամանակ անց դիմումների մեծ մասը հետ են վերցվում: Բազմաթիվ դեպքերում կանայք դիմում են այն անձանց, ում վստահում են՝ ընկերուհուն, հարևանին, մանկավարժի կամ համայնքային ազդեցիկ որևէ անհատի:
- Կան որոշակի արձագանքման մեխանիզմներ, սակայն բռնության ենթարկված կինը համապարփակ աջակցություն (ֆինանսական անկախություն և բնակարանային լուծումներ) չի ստանում:
- Գենդերային բռնության ենթարկվածներին աջակցող ծառայություններ՝ հոգեբանական աջակցություն, ապաստարանային ծառայություններ և վերականգնողական աջակցություն մարզի տարածքում գրեթե գոյություն չունեն: Մարզի տարբեր համայնքներում գոյություն ունեն որոշակի կառույցներ, որտեղ կանայք կարող են կիսվել իրենց խնդիրներով, սակայն դրանք հիմնականում կենտրոնացված են սահմանափակ տարածքներում: Այս խնդիրն առավել սուր է գյուղական համայնքներում:
- Շատ համայնքներում դեռևս բացակայում է համարժեք իրազեկություն այն մասին, թե ինչն է համարվում բռնություն և ինչ իրավունքներ ունեն կանայք:

Ճգնաժամային իրավիճակների արձագանքում

- Պատերազմները հանգեցրել են հոգեբանական և սոցիալական ծանր հետևանքների՝ ստեղծելով կանանց հոգեբանական աջակցության կարիք:

- Քովիդ-19 համավարակն ավելացրել է կանանց սոցիալ-տնտեսական խոցելիությունը, սակայն նաև ստեղծել է նոր հնարավորություններ՝ հեռավար աշխատանքի և կրթության ոլորտում:
- Դեբեդի վարարումը նշանակալի վնաս է հասցրել գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց՝ նրանց պատճառելով եկամուտների կորուստ և խախտել համայնքային կյանքի նորմալ կենսագործունեությունը:
- Կլիմայական փոփոխությունները առաջ են բերել առողջական խնդիրներ և նվազեցրել գյուղատնտեսական ակտիվությունը, ինչը զգալի ազդեցություն է ունենում կանանց կյանքի որակի վրա:
- Համայնքներում առկա են լուրջ բացթողումներ արտակարգ իրավիճակների արձագանքման հմտությունների և կրթության հարցում, հատկապես՝ կանանց շրջանում:

Առաջարկություններ

Կրթություն

- Դասընթացների և վերապատրաստումների կազմակերպում նաև գյուղական համայնքներում՝ թիրախային և կարիքահեն մոտեցմամբ, մշտադիտարկման բարելավում, առավել հասցեական միջամտությունների կազմակերպում՝ արդյունավետության բարձրացման համար:
- Բնակիչների բնապահպանական խնդիրների իրազեկման ծրագրերի իրականացում:
- Գյուղատնտեսական նորարար կրթության վրա ներդրումների կատարում, որպեսզի առկա ռեսուրսներն օգտագործելով սկսեն եկամուտ ստանալ:
- Հեռավոր համայնքներում ուսանողների համար առանձին տրանսպորտի հատկացում:
- Հետազոտության միջոցով կարծրատիպային մտածող տղամարդկանց տոկոսի որոշում, ապա նոր միջամտության մեխանիզմների մշակում՝ կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկման նպատակով:
- Ծնողավարման հմտությունների թեմաների հետ մեկտեղ գենդերային հավասարությանն ուղղված նյութերի ներկայացում համայնքների տարբեր խմբերին:
- Ավելի երկարաժամկետ արդյունք ապահովող ծրագրերի մշակում. մայրիկների կրթական մակարդակի բարձրացում՝ «Մայրիկների կրթական դպրոց», ինքնօգնության խմբեր, ինքնարտահայտման ապահով տարածքներ:
- Հատուկ կարիքներ ունեցող կանանց համար խելացի հարմարեցումների ապահովում՝ կրթական գործընթացներում ներգրավվելու համար: Համայնքային մակարդակում հարմարեցված կրթական միջավայրի և ուղեկցողի ծառայությունների ապահովում՝ հաշմանդամություն ունեցող կանանց կրթական ներառման նպատակով:
- Կրթության համակարգում պրակտիկ գիտելիքներով դասախոսների և ոչ ֆորմալ կրթության դասավանդողների ներգրավում, կրթական նոր հարթակների ստեղծում:
- Ցկյանս ուսումնառության հնարավորությունների մասին իրազեկում, կրթության արժևորում:
- Մեդիագրագիտության՝ որպես առարկայի ներգրավում կրթական ծրագրերում:
- Իրենց ցանկացած կրթությունն ստացած և հաջողած կանանց լավ օրինակների մասին իրազեկում համայնքներում:

- Կանանց և աղջիկների խրախուսում, որպեսզի հենց իրենք հանդիսանան նախաձեռնող, դառնան «փոփոխությունների գործակալներ»:
- Համայքներում մշակույթի տների գործառույթներում տարեցների աջակցման և համայնքներում առկա ռեսուրսների փոխանակման հնարավորությունների ընձեռում:
- ՍՀԽ-ի կողմից օրենսդրական նախաձեռնության ներկայացում նպատակասլաց, լավ առաջադիմությամբ և խոստումնալից գյուղաբնական աղջիկների ու կանանց համար անվճար սովորելու արտոնյալ պայմանների ստեղծման համար:
- Կազմակերպությունների համախմբում կոնկրետ նախաձեռնությունների շուրջ՝ փոփոխությունների համար անհրաժեշտ կրիտիկական զանգված ստեղծելու համար:
- Աշխատաշուկայի կարիքների և մարզի ու համայնքի կարիքների վրա հիմնված մասնագիտությունների ներկայացում, մարդու, աշխատանքային իրավունքների, անձնային աճի, ինքնագնահատականի բարձրացման վերաբերյալ դասընթացների կազմակերպում:

Աշխատանք/զբաղվածություն

- Գործատուների կարիքների հիման վրա վերապատրաստումների իրականացում:
- Իրազեկման և կրթական արշավների կազմակերպում կանանց աշխատանքային իրավունքների, խտրականության կանխարգելման և աշխատավայրում ապահով պայմանների ստեղծման վերաբերյալ, խտրականության դեպքերի արձագանքման և պաշտպանության մեխանիզմների ներդրում:
- Համայնքներում իրավաբանական աջակցություն տրամադրող կենտրոնների և օժանդակ խմբերի ձևավորում:
- ՍՀԽ-ի կողմից օրենսդրական նախաձեռնության ներկայացում աշխատավայրերի պայմանների վերահսկողության ապահովման, ոլորտային բռնության և շահագործման նվազեցման համար:
- Համայնքներում վաղ մանկության կրթության և տարեցների խնամքի ծառայությունների ներդրում և ընդլայնում:
- Երեխայակենտրոն գործատուների խրախուսում՝ ճկուն աշխատանքային մոդելների ներդրման համար:
- Աշխատաշուկայի համապարփակ գնահատման իրականացում՝ քարտեզագրելով կանանց զբաղվածության հնարավորությունները Լոռու մարզի բոլոր համայնքներում:
- Կանանց ներգրավում մասնագիտական կողմնորոշման դասընթացներում:

- Ինքնուրույն կարիերա ստեղծած և հաջողած կանանց դրական օրինակների լուսաբանման ակցիաների, կենդանի գրադարանների, այլ միջոցառումների կազմակերպում:
- Համայնքում աշխատող կանանց խրախուսման միջոցների կիրառում՝ մյուս կանանց ևս աշխատաշուկա մտնելուն խթանելու և մոտիվացնելու համար:
- Փափուկ հմտությունների վերաբերյալ դասընթացների կազմակերպում նաև Միասնական սոցիալական ծառայության ներգրավմամբ:
- Կանանց և աղջիկների համար մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստման ռեսուրս կենտրոնների հիմնում՝ ուղղված նաև ոչ ավանդական մասնագիտություններում (ԳՏՃՄ) նրանց ներգրավմանը:
- Տեղային մասնագիտական դասընթացների և վերապատրաստման ծրագրերի գործարկում, որոնք հիմնված կլինեն մարզի տնտեսական առանձնահատկությունների վրա (գյուղատնտեսություն, զբոսաշրջություն և այլն):
- Համայնքահեն փոքր և միջին ձեռնարկատիրությունների զարգացում՝ խթանելով կանանց ձեռնարկատիրական հմտությունները և տրամադրելով ֆինանսական ու խորհրդատվական աջակցություն:
- Կիրառական հմտությունների ուսուցման հարթակների զարգացում, որոնք կապահովեն դասընթացից հետո իրական զբաղվածություն կամ ինքնազբաղվածություն:
- Համայնքահենք տեղեկատվական ցանցերի ստեղծում՝ պետական և միջազգային վերապատրաստման և զբաղվածության ծրագրերի մասին կանանց իրազեկելու համար:
- Առցանց աշխատանքի հնարավորությունների ընդլայնում՝ բարձրացնելով թվային գրագիտությունը և տրամադրելով տեխնիկական աջակցություն:
- Մարզային և համայնքային տնտեսական զարգացման պլանավորման գործընթացներում կանանց ներգրավվում:
- Կարծրատիպերի դեմ աշխատող կրթական ծրագրերի, իրազեկման արշավների և նախաձեռնությունների իրականացում՝ սկսած դպրոցական տարիքից: Կանանց՝ աշխատանքային ներգրավվածության և տղամարդկանց՝ ընտանիքում ներգրավվածության խթանմանն ուղղված սոցիալական արշավների կազմակերպում՝ ներառյալ ազգային փոքրամասնությունների համայնքներում:
- Տղամարդկանց կրթում՝ բռնության դեպքերի նվազեցման նպատակով:
- Թույլ հասանելիությամբ համայնքներում տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում, կանանց՝ ուսուցման և աշխատանքային գործընթացներում ներգրավման համար:

Առողջապահություն

- Կանանց առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման նպատակով պարբերական անվճար բժշկական զննումների և իրազեկման ծրագրերի իրականացում, որոնք կներառեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջության բաղադրիչները:
- Համայնքներում ծառայությունների մատչելիության ընդլայնման համար առողջապահական կենտրոնների կարողությունների զարգացում՝ ապահովելով նեղ մասնագիտացված բժիշկների պարբերական այցելությունները և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումների տեղադրումը:
- Առաջնային հետազոտությունների հասանելիության ապահովում հատկապես հեռավոր գյուղական համայնքների բնակիչների համար:
- Առաջարկների փաթեթի մշակում, որով առողջապահական ծառայություններն ավելի հասանելի կդառնան նաև աշխատող մարդկանց համար:
- Սոցիալական փաթեթի հնարավորությունների ավելացում. սոցիալական արտոնությունների շրջանակի ընդլայնում՝ ընդգրկելով ոչ միայն վիրահատական միջամտությունները, այլև ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայությունները:
- Անվճար բժշկական ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկում:
- Բժիշկ-բուժառու կապի ապահովում և ամրապնդում, «խրախուսման» ոչ ֆորմալ մշակույթի վերացում:
- Էթիկայի կանոնների լավ տիրապետում և պարտադիր կիրառում:
- Բուժանձնակազմի վատ սպասարկման և էթիկայի խախտումներին արձագանքում:
- Բժշկական անձնակազմի սերնդափոխության ապահովում. նորավարտ երիտասարդ կադրերի ներգրավում և վերապատրաստում մարզային կլինիկաներում, որակյալ մասնագետների ներգրավում, երիտասարդ բժիշկների վերադարձ՝ համայնքներ:
- Գինեկոլոգիական և վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության բարձրացում, այդ թվում՝ շարժական կլինիկաների և դաշտային բժշկական թիմերի գործարկում՝ հատկապես գյուղական համայնքներում, անվճար մամոգրաֆիկ հետազոտություններ տարիքային շեմի իջեցում:
- Վերարտադրողական առողջության այլընտրանքային ուսուցման մոդուլների կիրառում և ընտանիքի պլանավորման հստակ մեխանիզմների տրամադրում, սեռական և վերարտադրողական առողջության հիմունքների վերաբերյալ հանրության իրազեկում:

- Մայրության դպրոցների զարգացում. հղիների համար նախածննդյան և հետծննդաբերական շրջանի խորհրդատվության ապահովում և պատրաստում:
- Հոգեկան առողջության ոլորտում տեղական խորհրդատվական կետերի ստեղծում և հեռավար հոգեբանական խորհրդատվության ապահովում, հոգեկան առողջության և տնային խնամքի ծառայությունների զարգացում
- Անվճար հոգեբանական ծառայությունների ապահովում հատկապես ընտանիքում պատերազմի մասնակից ունեցած անձանց կամ Արցախից տեղահանվածներին:
- Կարիքահեն մոտեցման կիրառում՝ կանանց անհրաժեշտ ծառայությունների շրջանակի ճշտմամբ:
- ՍՀԽ-ի կողմից կանանց առողջապահական կարիքների մասին տեղեկատվության գրավոր ներկայացում նախարարությանը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար բժշկական ծառայությունների հասանելիության և ֆիզիկական մատչելիության ապահովում:
- Բժշկական տվյալների թվայնացված փոխանակման համակարգերի ներդրում:
- Համալիր և համակարգային մոտեցման կիրառում՝ ֆինանսավորման նպատակային ուղղորդման, մարդկային և ինստիտուցիոնալ ռեսուրսների համադրման միջոցով. սա կարևոր նախապայման է առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության բարելավման համար:
- Առողջապահական համակարգի բարելավումը կնպաստի ոչ միայն կանանց առողջության պահպանմանը, այլև նրանց սոցիալ-տնտեսական ներգրավվածության և կյանքի որակի ընդհանուր բարձրացմանը:

Քաղաքական մասնակցություն/առաջնորդություն

- Հաջողված պատմությունների տարածում. քաղաքական կամ առաջնորդության ոլորտում հաջողության հասած կանանց, անհատական պատմությունների տարածում (story telling):
- Առաջնորդական ներուժով օժտված երիտասարդ աղջիկների ներգրավում տարբեր զարգացնող ծրագրերում:
- Իրավագիտակցության բարձրացում, քաղաքական որոշումների կայացման կարևորության ընդգծում, իրավունքների հանդեպ պահանջատիրական մոտեցման ձևավորում:
- Իրազեկման աշխատանքների իրականացում ինքնարժևորման և հասարակության լիարժեք անդամի ինքնընկալում ձևավորելու նպատակով:

- Կոմպետենտ մասնագետների կողմից համապատասխան վերապատրաստումների իրականացում փափուկ հմտությունների ողջ փաթեթի զարգացման նպատակով՝ հատկապես հանրային խոսքի, ինքնակառավարման, ինքնաներկայացման հմտությունները:
- Մենթորական ծրագրերի ներդրում առավել փորձառու կին քաղաքական գործիչների կողմից այդ ոլորտ նոր մտնող երիտասարդ կանանց աջակցության ապահովմամբ:
- Երիտասարդ կին քաղաքական գործիչների ինքնադրսևորման նպատակով դրամաշնորհների տրամադրում՝ համայնքային ծրագրերի համար:
- Տեղական ինքնակառավարման ինստիտուտում հասարակական հիմունքներով խորհրդականների՝ հատկապես երիտասարդների ներգրավում:
- Տղամարդկանց տարբեր գործընթացներում ներգրավում՝ կանանց տեսակետները լավ պատկերացնելու, գենդերային զգայունույթուն զարգացնելու և գենդերային փոխակերպող մտայնության ձևավորման համար:
- Իգական սեռի քաղաքական գործիչներին թիրախավորելու դեպքում հոգեբանական աջակցության ապահովում:

Գենդերային հիմնախնդիրներ

- «Գենդեր» եզրույթի սխալ մեկնաբանություններից խուսափելու համար իրազեկման շատ ու մեծ գործընթացների նախաձեռնում՝ ներգրավելով բոլոր գործընկեր կազմակերպություններին:
- Համայնքներում գենդերային հավասարության մասին իրազեկման բարձրացում զգույշ և հաշվարկված մոտեցմամբ՝ դիմադրությունից և իրենց ավանդույթների նկատմամբ ոտնձգությունների թյուրըմբռնումից խուսափելու համար:
- Յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունների հաշվառում ծրագրի նախագծման ընթացքում, նախկինում իրականացված ծրագրերի փորձառության գործածում՝ արդյունավետության բարձրացման համար:
- Գենդերային հիմքով բռնության կամ խտրականության ենթարկվածներին աջակցող միջամտություններում համակարգային մետոցման կիրառում. ոչ միայն բռնության փաստի արձանագրում, այլև բռնարարից հեռանալու դեպքում հիմնարար աջակցության մեխանիզմների գործարկում:
- Միջամտական և անխարգելիչ աշխատանքների բաշխում. արդեն տեղի ունեցած Ը/Բ դեպքերին համարժեք արձագանքում և գրագետ միջամտության ապահովում՝ առանձին կանանց կյանքին և անվտանգությանը սպառնացող վտանգ-

ների չեզոքացմամբ: Կանխարգելիչ աշխատանքների իրականացում հաջորդ սերունդների մոտ բռնության կանխարգելման համար:

- Վստահելի համայնքային դերակատարի ներգրավում իրազեկման աշխատանքներում. համայնքի ավագանու իգական սեռի անդամների և ոստիկանների կողմից Ը/Բ դեպքերի միջամտության մեխանիզմների մշակում:
- Ը/Բ ենթարկվող կանանց մոտ ինքնագնահատականի բարձրացման միջոցառումների կազմակերպում:
- Բոլոր համայնքներում ՍՀԽ-ի թեժ գծի և այլ ծառայությունների մասին ներկայացում, այլ համայնքներում ևս ՍՀԽ-ի պես կենտրոնների ցանցի ստեղծում
- SAFE YOU-ի հետ համագործակցություն. հավելվածի մասին կանանց իրազեկում՝ ոչ միայն ճգնաժամային իրավիճակում դիմելու, այլև անանուն իրենց հուզող հարցերը քննարկելու հնարավորության վերաբերյալ:
- Ոլորտի մասնագետների վերապատրաստում բռնության նույնականացումից զատ նաև օգնելու անհրաժեշտության սահմանները հստակեցնելու վերաբերյալ:
- Մասնագետներին սուպերվիզիայով ապահովում՝ այրման համախտանիշի հավանականությունը նվազեցնելու համար:
- Ը/Բ վերապրած ու հաղթահարած կանանց պատմությունների՝ ընտանեկան արժեքների, հոգատարության և դրական ծնողավարման մասին դրական հույզեր առաջացնող անիմացիաների ստեղծում և դրանց շրջանառում սոցիալական հարթակներում:
- Կանանց հիմնական կապուղիները բացահայտելու և հասցեական տեղեկատվության տրամադրման համար հետազոտության իրականացում:
- Հասցեական պրակտիկ աշխատանքի ապահովում կոնկրետ սկզբունքով հավաքագրված խմբերին՝ գենդերային հիմնախնդիրների ներկայացմամբ:
- Գենդերային հիմքով խտրականության և բռնության ճանաչելիության և համապատասխան ծառայությունների մասին իրազեկման բազմազան գործիքակազմի կիրառում՝ արշավներ, գովազդային վահանակների տեղադրում, դասընթացներ, սեմինարներ, քաղաքային ակցիաներ, ֆիլմի դիտում-քննարկում, ֆորում թատրոն, կանանց ակումբների ստեղծում, աղջիկների ճամբարների հիմնում, տարբեր կապուղիներով՝ սոցիալական էջերով, պաստառներով, դպրոցով:
- Համագործակցության հիմնում ՏԻՄ-երի և ԿԳՄՍ-ի հետ, բոլոր ծնողներին գենդերային հավասարության մասին պարտադիր դասընթացներում ներառում
- Դպրոցներում համապատասխան մոդուլների ներդրում ընտանիքի, առողջ հարաբերությունների, նաև սեռական կյանքի վերաբերյալ՝ ամուսնական հարաբերություններում բռնության բոլոր ձևերի կանխարգելման համար:

Խտրականություն:

- Խտրականության վերացմանն ուղղված միջոցառումներ. ֆիլմերի, ֆորում թատրոնների դիտում-քննարկում, այլ գործիքակազմի կիրառում:
- Հաշմանդամություն ունեցող կանանց համար տանից առցանց աշխատելու տարբերակների մշակում, խելացի հարմարեցումների ապահովում կրթօջախներում, աշխատավայրերում, առողջապահական կառույցներում:
- Կանանց և մյուս բոլոր խմբի ներկայացուցիչների կողմից որոշումների կայացման գործընթացներում մասնակցության ապահովում:
- Սոցիալական ներառման մասին իրազեկող ու հարգանք և հոգատարություն խրախուսող միջոցառումների կազմակերպում:

Ճգնաժամային իրավիճակներին արձագանքում

- Կանանց համար նպատակաուղղված վերապատրաստումներ և կանխարգելիչ ծրագրեր՝ կայունությունն ու դիմացկունությունը բարձրացնելու նպատակով:
- Ճգնաժամային կառավարման տեսանկյունից իրազեկվածության բարձրացում և կրթական ծրագրերի իրականացում չափահասների համար:
- Ճգնաժամային իրավիճակների արձագանքման և դիմակայման վերաբերյալ իրազեկման տեսանյութերի պատրաստում և տարածում:
- Ճգնաժամային կառավարման մասին տեղեկատվական հանդիպումների շարունակական կազմակերպում, որպեսզի ազդեցիկ լինեն և անպայման ներառեն գործնական աշխատանքներ:
- Տարբեր համայնքների և տարբեր կրթական մակարդակ ունեցող մարդկանց համար տարբեր մոտեցումների կիրառում:
- Լավ արդյունքների համար բոլոր կառույցների ակտիվ համագործակցության ապահովում. ներառականության և «Ոչ ոքի չանտեսելով» մոտեցումների ակտիվ կիրառում: